Մնաս բարով, արտասուրս լեզուս կապ ե գցում:
Դու անհավատի սիրուն աղջիկ, դու անուշիկ հրեու-
հի, թե վոր մի քրիստոնյա ավագակութիւմբ քիզ
ձեռք չըրի՞ յես վոչինչ չեմ հասկանում: Աս հիմար
կաթիները մի քիչ խեղզում են իմ տղամարդությու-
նը. մնաս բալ ով:

Զեսիկա

Քնառ բարով, մեր բարի Լանսըլուս:

Լանսըլուտը գնում ե

Ա՛խ, ինչ սոսկալի մեղք եմ իս գործում,
Վոր ամաչում եմ, ամաչում՝ իմ հոր զավակ լինելուց:
Թեև արյունով նըս աղջիկն եմ, բայց բարքով՝ բնավի
Ո՞չ, իմ Լորենցո, լեթե իսկապես խոստումդ պահես,
Այս պայքարներին շուտով վերջ կտամ
Եեվ կդառնամ իս քրիստոնյա մի կին, և քեզ սիրող կին:

Գնում ե

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՌԴ

Մի փողոց Վենետիկում

Գալիս են Գը աց ի անոն, Լորենցոն,

Սալարինոն և Սոլարիոն

Լորենցո

Մենք լերեկոյան դուրս կդանք գաղտուեկ,
Կդնանք ինձ մոտ, դիմակ կդնենք և յետ կդառնանք,
Եեվ այդ բոլորը մի ժամ չի տեի:

ԳՐԱԾԻՎՅԱՆ

Բայց պատրաստված չենք, ինչպես վոր պետք ե:

Սալարինո

Զահակիրներ ել մենք չենք պատվիրել

ՍՈՅԱԲԻՒ

Փուչ բան դուրս կդա՞ լեթե գեղեցիկ չկաղմակերպվի.
Եեվ կարծեմ լավ ե, վոր չձեռնարկենք:

Լորենցո

Նոր ժամը չորսն ե, լերկու ժամ ունենք լավ
պատրաստվելու:

Գալիս ե լանսըլուտը՝ մերին մի օտակ

Խոնչ լուր, Լանսըլուտ

ԼԱՅՈՐԼՈՅ

Յելքե բարեհաճեք բաց անել ալս թուղթը՝ նշա-
նավոր լինելը կհասկանաք:

Լորենցո

Գիրն ինձ ծանոթ ե, սիրուն ձեռագիր,
Յեվ զբող ձեռքն ե ավելի ճերմակ, քան զբած թուղթը:

ԳՐԱԾԻՎՅԱՆ

Սիրու չուր, անշուշտ,

ԼԱՅՈՐԼՈՅ

Թուլլ տվեք, սլարոն:

Լորենցո

Սիմմ մեր ես գնում:

ԼԱՅՈՐԼՈՅ

Գնում եմ հին տիրոջս, Հրեալին ընթրիքի հրա-
վիրելու նոր տիրոջս՝ քրիստոնյալի տանը:

Լորենցո (քրամ տալով)

Առ այս պահիր քեզ.

Եեվ Զեսիկալին իմ կողմից ասա, թի՞ հաստատ կդամ,
Բայց ձածուկ տսիս, Գնա:

Լանսըլստը գնում ե

— Պարոններ,
Ցեթե միտք ունեք դուք դիմակախաղ սարքել այս գիշեր,
Ցես իմ ջահակիլն արդին գտել եմ:

Սալարինո

Այս, գնում եմ յես պատրաստվելու:

Սոլանիո

Ցես նմանապես:

Լորենցո

Մի ժամից հետո յեկեք գտեք ինձ և Գրացիանուին
Այնուեղ, նրա մոտ:

Սալարինո

Ղավ, այդպես կանենք:

Սալարինոն յեկ Սոլանիոն գնում են

Գրացիանո

Ասմ, նամակը Զեսիկալից եր:

Լորենցո

Այս, բոլոր պետք ե պատմեմ քեզ:
Նա կարգագրել ե թե ինչպես պետք ե փախցնեմ իրեն,
Գրել է, վորքան վոսկի ու գոհոր կիերցնի իր հետ,
Թե անկավիկի հագուստ ե ծարել հագնելու համար,
Ցեթե այն հրեան գրախու ել գնա,
Իր սիրուն գոտեր շնորհիվ կիինի.
Ցել լեթե յերբեք աղջիկն հանդիպի մի որ փորձանքի,

Բախտը կանե այդ սոսկ նրա համար,
Վոր նա անհավատ արդ հրեալի աղջիկն ե յեղել:
Գնանք միասին. դու ճանապարհին կարդա այս
թուղթը,—
Սիրուն Զեսիկան պետք ե ինձ համար ջահակիր դառնա:

Գնում են

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՒԳԵՐՈՐԴ

Շայլոկի տան տռաջ

Գալիս են Շայլոկն ու Լանսըլուս

Շայլոկ

Հիմա կտեսնես և կհասկանաս
Ծերուկ Շայլոկի և Բառանիուի տարբերությունը:
— Եհ Եյ, Զեսիկա: — Զես կարող լցնել վորկորդ
այնպես,
Ինչպես իմ տանն... — ԵհԵյ, Զեսիկա:
— Քնիլ, խոճփալ, հագուստ պատոստեք:
— Զեսիկա, հհԵյ, աղջիկ, քեզ հետ եմ:

Լորենցո

ԵհԵյ, Զեսիկա:

Շայլոկ

Ո՞վ ասաց կանչես. յես քեզ չասացի վոր նրան կանչես:
Լանսըլոս

Զերդ Մեծապատվությունը միշտ յերեսովս եր տա-
լիս, թե վոչինչ չեմ անում, մինչեւ ինձ չեն ասում:

Գալիս և Զեսիկան

Զեսիկա

Ի՞նձ ելիք կանչում. ի՞նչ ես կամհնում.

Շայլոկ

Յես հրավիրված եմ այսոր ընթրիքի.

Ահա, Զեսիկա, բանալիներս — Բայց ինչն գնամ.

Սիրուց չե, վոր ինձ հրավիրում են, շողոքորթում են.

Իսկ յես կդնամ իմ զոխի դրդված՝

Արդ քրիստոնյալի հացը ուտելու:

— Զեսիկա, աղջիկս, լավ նախիր տանը:

— Դժկամ եմ զնում, կարծես թե իմ դեմ մի բան ենյութվում.

Հենց յերեկ դիշեր վոսկու քսակներ տեսա ինքազում.

Լաճորլոս

Աղաչում եմ, տեր իմ, յեկեք գնանք. իմ պարոնը սպասում ե Զեր Մեծապատվության:

Շայլոկ

Յես ել՝ նըա մեծ անպատվության:

Լաճորլոս

Դաղոնի մի բան են սարքել. չեմ ասում թե դուք մի դիմակախաղ եք տեսնելու. բայց յեթե ալդ պիս լինի՝ ապա զուր անդը չեր, վոր անցած ավագութերկուշարթի առավու ժամը վեցին քթիցս արյուն լեկավ, քանի վոր չորս տարի առաջ այդ բանը չորեք շաբթի որը կեսորից հետո պատահեց:

Շայլոկ

Ի՞նչ, դիմակախաղ. լսիր, Զեսիկա,

Դըսներս փակիր, և յերբ թմբուկի աղմուկը լսես,

Կամ թե սրնգի խայտառակ ձայնը՝

Զցատկես դեպի պատուհանները,

Գլուխդ հանես ալդ ներկված հիմար

Քրիստոնյաներին նայելու համար,

Ալ ամուր փակիր տան ականջները

Լուսամուտները՝ ուզում եմ ասել.

Ալդ կապկությունների անմիտ աղուկը չպետք ե մտնի

Իմ ժուժկալ տունը — Հակոբի ցուպն ե վկա. վոր բնավ

Սիրու չի ուզում այս գիշեր գնալ նըանց խնճուքին.

Բայց պետք ե գնամ: Տղա, դու առաջ գնա և ասա,

Վոր շուտով կըդամ:

Լաճորլոս

Գնում եմ, պարոն:

Առանձին՝ Զեսիկային

Որիորդ, զու նըան մի լսիր, նայիր լուսամուտից դուրս,

Յեկ մի քրիստոնյա այնտեղից կանցնի՝

Հրեա աղջկա աչքին արժանի:

Գնում ե

Շայլոկ

Հակարի ծնունդն ի՞նչ եր ասում, հը:

Զեսիկա

Վոչինչ, ինձ ոմասքարովք եր ասում:

Շայլոկ

Այդ փուչ կենդանին այնքան ել վատ չե, բայց
շատակեր ե,
Աշխատանքի մեջ դանդաղաշարժ ե խխունջի նման,
Որը ցերեկով վարենի կատվից շատ ե մրափուճ.
Իշամեղուներ չպետք ե մտնեն իմ փեթակի մեջ:
Դրա համար եմ նրան դուրս հանում.
Ցեվ դուրս եմ հանում, վոր տամ մի մարդու, —
Նրա պարտք առած քսակը շուտով պարպելու համար:
— Ներս գնա. յես ել շատ կարելի չե, վոր իսկույն
յետ գամ.

Ասածս արա, դոները փակիր.

Ինչ վոր լավ փակես, լավ ել կգտնես.

Դա մի առակ ե, վոր ամենեին խնայող մարդուն հին
չի յերեսում.

Գնում ե

Զեսիկա

Լավ, գնաս բարով. և յեթե բախտիս մի փորձանք չդա, —
Ցես այս գիշեր հայր պիտի կորցնեմ, իսկ դու՝ մի
աղջիկ,

Գնում ե

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Դալիս են Գըացի անոն և Սաւարինոն՝ դիմակավորված

Գրացիան

Այս ծածկի տակ ե, վոր մեզ կորենցոն ասաց սպասենք:

Սալարին

Բայց վորոշած ժամն անցել ե կարծես:

Գրացիան

Զարմանալի չե, վոր ուշանում ե իր ասած ժամից,
Սիրահարները միշտ ժամացույցից առաջ են ընկնում,

Սալարին

Աֆրոդիտեի աղավնիները սովոր են թռչել
Ո՛, տասն անգամ ավելի արագ՝
Նոր սիրո ուխտեր կնքելու համար,
Քան թե հարկադիր հավատարմությունն անխախտ
պահելու:

Գրացիան

Միշտ ել ալդպես ե, ով ե վեր կենում մի
հացկերութից
Նույն ախորժակով, վորով նստել եր.

Վո՞ր ձին ե դառնում առանց ձանձրութիւն իր յեկած
ճամբով,

Միւնույն թափով, վորով անցել եր առաջին անգամ:

Ամեն մի բանի հետապնդութը

Միշտ ափելի իհ վոգելորիչ, քան նրա վայելքը:

Դրոշազարդ նավն, յերբ ծախս ե մեկնում

նավահանգստից՝

Վո՞րքան նման ե մի խենթ պատանու, անառակ
վորդուն,

Ցեվ ինչպես նրան գրկում, գդվում ե այս պոռնիկ

հողմը.

Բայց վո՞րքան նման անտառակ վորդուն նա տուն ե
դառնում:

Զարդված կողերով և ծվեն-ծվեն առազաստներով,

Հլուծված, գզզված և պոռնիկ հողմից մուրացկան
դարձած,

Ասլարին

Ահա Լորենցոն. մնացածը հետո
Գալիս և Լորենցոն

Լորենցոն

Այս, բարեկամներ, ներեցեք լոր յես այսքան ուշացաւ,
Յես չեմ ձեզ այսքան սպասեցնողը, այլ իմ զործերն ենու
Եերը դուք ել հաճեք կնոջ դող դառնակ՝
Յես ել ձեզ այսքան կսպասեմ սիրով:
Դեհ, առաջ յեկեք, այստեղ ե ապրում հրեա աներս:
— Հետ, ով կա տանը:

Վերելից յերեվում ե Զետիկան տղայի հագուստով

Զեսիկա

Ո՞վ ես դու, ասա, վոր ել այլելի ապահով լինեմ.
Թեպետե ձախնդ յես ձանաշեցին

Լորենցոն

Լորենցոն եմ յես, քո սիրեկանը,

Զեսիկա

Լորենցոն՝ հաստատ, և սիրեկանս՝ այդ ել անկասկած:
Ել ժվկա, վորին յես այսքան սիրեմ.
Յեզ քեզնից բացի, ժվկ կիմանա, վոր քեզ եմ
պատկանում:

Լորենցոն

Յերելինքն ու սիրադ վկա, վոր իմն ես:

Զեսիկա

Բոնիր այս արկղը, — նեղությանն արժե,
Կմվ, վոր գիշեր ե և ինձ չես տեսնում.
Ամաչում եմ իմ այս ծպտած ձեից,
Բաց սերը կուր ե և սիրողները
Չեն տեսնում իրենց խենթությունները:
Ցեթե տեսնելին, — կուպիդոնն ինքն ել անշունչ
կամանչեր՝
Տեսնելով ինչպես տղա յեմ դարձել:

Լորենցոն

Ցած էջիր, արի, դու պետք ե դառնաս իմ ջահակիրը:

Զեսիկա

Ի՞նչ, իմ ամոթին ճրամգն եր պակաս:
Վոչ, իմ սիրելի, հայտնագործողի մի պաշտօն ե ալդ,
իսկ յես պետք ունեմ ծածկագործության:

Լորենցոն

Հենց այդ տղակի սիրուն հագուստը,
Իմ անուշիկս, քեզ լավ ե ծածկում:
Բայց շուտ արա, յեկ. խավար գիշերը փախուստ ե
Յեկ Բասանիովի խնջույքում վաղուց սպասում են մեզ:

Զեսիկա

Դոները փակեմ և դուկատներով
Մի քիչ ավելի ինձ վոսկեղարդեմ, և իսկույն կգամ:
Ինունում ե վերելից

Գերացիան

Պոպովս վկա, հրեուհի չե, այլ իշխանուհի:

Արենց

Նզոված լինեմ թե ամբողջ սրտով չսիրեմ նրան,
Նա խելացի լի, յեթե ընդունակ եմ այդ դատելու,
Յեվ սիրուն ենա, լիթե աչքերս ճշմարտածն են.
Հավատարիմ ե, ինչպես ցուց տվեց.
Յեվ ինչպես վոր կա՝ խելացի, սիրուն և հավատարիմ,
Նըա տեղը թող իմ հավատարիմ հոգու մեջ լինի:

Զետիկան գալիս ե ներքել

Ա՛հ, յեկար: Գնանք, պարոններ, առաջ:
Դիմակախաղի մեր ընկերները սոլասում են մեզ:

Զետիկան յել Սալարի նոսն գնում են

գալիս ե Անտոնիոն

Անտոնիո

Այդ ով կա այստեղ:

Գրացիան

Մինիոր Անտոնիո:

Անտոնիո

Ա՛հ, այ, Գրացիանո, մյուսները մուր են:
Ժամը ինն ե այժմ. մեր ընկերները քեզ են սպասում.
Դիմակահանդես չունենք այս գիշեր. քամին փոխվել ե.
Մինիոր Բասանիոն ուզում ե խոկուն ճանապարհ
ընկնել,
Յես քսան հոգի ուղարկել եմ, վոր քեզ գտնեն բերեն:

Գրացիան

Ա՛հ, շատ ուրախ եմ, յես ավելի մեծ ցանկություն
չունեմ,

Քան հենց այս գիշեր առագաստ բանալ և ճամբա
ընկնել:

Գնում եմ

ՏԵՍԱՐԱՆ ՑՈԹԵՐՈՐԴ

Բելմոնտ, մի սենյակ Պորցիայի տանը

Փողեր Մանում են Պորցիան, Մարոքի իջևանը և նրանց

հետեւրդները

Պորցիա

Գնացեք, բացեք վարագույրները,
Ցուց ավելի առուփերն ազնիվ իշխանին
— Հիմա ընտրեցեք:

Մարոքի իօխան

Առաջին տուփը վոսկի յե և այս մակագիրն ունի,
«Ով վոր ինձ ընտե, կտահի, ինչ վոր շատերի իդան ե»:
Յերկրորդը՝ արծաթ, այս և խոսանում
«Ով վոր ինձ ընտե, կտահի՝ ինչին վոր արծանի յե»:
Յեվ այս յերրորդը կոպիտ, կապարե,
Ճիշտ իր պես կոպիտ մակագիր ունի
«Ով վոր ինձ ընտե, պետք ե ինձ համար
Տա յեվ վտանգե իր ամբողջ գույքը»:
Ի՞նչպես իմանամ թե ճիշտ եմ ընտրել:

Պորցիա

Իշխան, մի առուփում կա իմ պատկերը,
Յեթե այս ընտրեք՝ ճեղ եմ պատկանում:

Մարտի իօխան

Թող ինձ լերկինքը դեկալար լինի: Լավ. հիմա
տեսնեմ.
Մի նորից կարդամ մտկագիրները.
Լավ, ինչ ե ասում կապարե տուփը.
«Ով վոր ինձ բնիք, պետք ե ինձ համար
Ճա յեվ վտանգե իր ամբողջ գոյթը»:
Վոտանգե. ինչի. կապարի համար. վտանգավոր տուփ:
Այս, այն մարդիկ, վոր ումեն վտանգ նկատի ունեն,
Այդ բանն անում են մեծ շահի հույսով.
Վոտկեն հոգին փուչ բանի համար գետին չի թեքվի,
Յեվ յս ել վոչինչ չիմ վտանգելու կապարի համար:
Տեսնենք թե արծաթն ինչ ե ասում մեզ իր կուլս
լերանգով
«Ով վոր ինձ բնիք, կոտանա՝ ինչին վոր արծանի յե»:
Ինչին վոր արժե. այստեղ կաց, Մարոք.
Կշռիր արժեքը անաչառ ձեռքով.
Յաթե դու ինքդ քո գինն իմանսա բավական արժես,
Բայց կարելի չե, վոր այդ բավականն այնքան չլինի,
Վոր կարողանա որիորդին հասնել.
Սակայն վախենալ իմ արժանիքից
Նշանակում ե թուլասիրտ լինել՝ այդպես ինքս ինձ
քիչ գնահատել
Վորին արժան եմ, անշուշտ որիորդին եմ յս արժանի.
Այս, արժանի թե իմ ծագումով և թե իմ բախտով,
Թե իմ բնատուր, թե ստացական իմ շնորհներով.
Բայց ել ավելի քան այս բուրը, արժան եմ սիրով:
Ել ինչու համար իզուր տատանվել, թող իսկույն
ընտրիմ.
Բայց մեկ ել տեսնեմ այս վոսկու վրա փորագրիածը».

«Ով վոր ինձ բնիք, կոանի, ինչ վոր տատերի իղձն ե»:
Այս, որիորդն ի, նա յե բաղձալին ամբողջ աշխարհի.
Մարդիկ աշխարհի չորս անկյուններից ալստեղ են
գալիս
Այս դեռ կենդանի սրբի պատկերին մի համբույր
տալու.
Մեծ Հիրկանիալի անապատները
Յեկ Արարիալի տմայի, անմարդ լախությունները
Այժմ դարձել են մեծ պղողոտաներ, վորտեղից
անցնում,
Քալիս են հարուստ իշխանները չքնաղ Պորցիալի
համար.
Նույնիսկ յրակին մեծ կալնըությունը,
Վոր հաղարտությամբ թուք ե վեր ժալթքում յիրկնքի
դիմքին,
Զի գառնում պատվար այն ոտարներին,
Վորոնք անցնում են նրան՝ վորպես գետ,
Չքնաղ Պորցիալին տեսնելու համար:
Այս յերեք տուփից մեկումն ե որա
Նրա յիրկնակին, չքնաղ պատկերը:
Կարող ե արդյոք կապարե տուփը լինել այդ մեկը,
Մահցում ե այդպիսի ստոր մի բան մտածել
Մեծ կոպտություն ե նրան ամփոփել այդ մութ շիրմի
մեջ.
Կամ խորհեմ արդյոք թե պարփակված ե նա արծաթի
մեջ,
Ինչ վոր տասն անգամ պակաս զին ունի քան թե
զուտ վոսկին.
Ո՞հ, հանցավոր միտք, լերեք ալսպիսի թանգագին
մի քար

Զի շրջանակվել յեթե վոչ միայն աղնիվ վոսկու մեջ.
Անգլիայում կա մի վոսկե դրամ՝
Վրան դրոշմած հրեշտակի պատկեր.
Այնտեղ հրեշտակը վոսկու վրան ե,
Այստեղ մի հրեշտակ պառկած ե ներսը, վոսկի
անկողնում:
Տվեք բանալին, այս եմ ընտրում յես, և հաջողութիւնն:

Թորցիա

Ահա բանալին. յեթե պատկերս սրա մեջ լինի,
Յես ձերն եմ, իշխան:

Բաց ե անում վոսկե տուփը

Մարտի իշխան

Դժհիսք, ի՞նչ ե այս, մեռելի կմամսք,
Աչքի խոռոչում ծալծլված մի թուղթ.
Կարդամ գրվածը.

Կարդում ե

Ամեն փայլուն վոսկի չե,
Լսել ես խոռըն այս խելոք.
Շատ մարդ իր կյանքն ե ծախեւ,
Վոր յերեսս տեսնի լոկ.
Շատ վոսկեզոծ շիրիմներ
Ներսից լի յեն վորդերով.
Թե գլխիդ միջ խելք լիներ,
Վորքան խիզախ ես սրով,
Եեթե մարմնով դեռահաս,
Խելքով հասուն լինեյիր,
Ավելի լավ պատասխան
Պիտի անշուշտ առնեյիր,
Քան այս, — «գնաս զու բարձվ
Հույսերդ յելան ի դերեւ:

Այս, ի դերեւ. և ջանքերս իզնւր.
Գնաս, ջերմություն, յեկ մահվան սառուց.
Մնաս բարով, Պորցիա, խիստ լիքն ե սիրոս,
Յերկար հրաժեշտ ասելու համար:
Այսպես են մեկնում բախտ կողցնողները:

Դուրս ե գնում իր հետեւորդներով: Փաղերի ձայն
Պորցիա

Լավ ազատվեցինք: Գնացեք քաշեք վարագույրները:
Յերանի հենց միշտ ալսպիսի մարդիկ ինձ ալսպես
Ընտրեն:

Դուրս ե գնում

ՏԵՍԱՐԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ

Վենետիկ մի փողոց

Գալիս են Սալարին ո՞ն և Սոլան ի՞ոն

Սալարինո

Յես քեզ ասում եմ ինքս տեսա, վոր Բասանիոն
մեկնեց,
Գրացիանոն ել գնաց նրա հետ.
Բայց նրանց նավում Լորենցոն չկար:

Սոլանիո

Անզգամ հրեան գոռում-գոչումով դուքսին զարթեցրեց,
Յեվ նա նրա հետ իսկույն գնացին,
Վոր Բասանիոյի նավը խուզարկեն:

Սալարինո

Բայց շատ ուշ հասավ. նավը մեկնել եր

Յեվ այնտեղ մարդիկ հայտնեցին Դուքսին,
Վոր Հորենցոյին իր սրտաբորբոք Զևսիկայի հետ
Մի գոնդոլի մեջ տեսնող ե ինդել:
Անտոնիոն Դուքսին հավաստի ցըրեց,
Վոր Բասանիոլի նավի մեջ չելին:

Սոլանիո

Յերբեք չեմ տեսել այնքան անհնթեթ մի
կատաղություն,
Այնչափ այլանդակ, այնչափ քինալից, այնչափ
փոփոխուն,
Քան շուն հրեալի կատաղությունը մեր փողոցներում:
«Ո՞հ, իմ աղջիկս, ո՞հ, զուկատներս, ո՞հ, իմ աղջիկս
Քրիստոնյալի հետ իմ տընից փախչի։
Ո՞հ իմ քրիստոնյա այն զուկատները,
Ո՞հ, արդարություն, որենք, զուկատներ, ո՞հ իմ
աղջիկը։
Մի կընքված քառակ, ո՞հ, յերկու քսակ լի զուկատներով,
Յերկու կատներով, հարազատ աղջիկս ինձնից
գողանա

Սալարին

Ամբողջ քաղաքի տղերքն ընկել են նրա յետեից,
Աղաղակում, են, — «ո՞հ, իմ ակները, ո՞հ, իմ աղջիկը,
Ո՞հ, զուկատներ»։

Սոլանիո

Թող չմոռանա բարի Անտոնիոն իր պարտքի որը,
Թե չե, սրա տեղ նա կվճարեն:

Սալարին

Հա, միտս ընկալ.
Լոիր, հենց յերեկ խոսում եյի մի ֆրանսիացու հետ,
Յեվ նա ինձ պատմեց, թե, այն նեղ ծովում,
Վոր բաժանում ե Անգլիացիներն ֆրանսիացիներից,
Մեր յերերի մի նավ՝ ապրանքներով լի՝ խոր
ընկղմվել ե.

Նա պատմեց թե չե՝ իս միտ բերեցի մեր
Անտոնիոլին,
Մաքումո ասացի՝ յերանի նրա նավը չլինի։

Սոլանիո

Դու շատ լավ կանես, վոր Անտոնիոլին լածդդ
պատմես,
Բայց հանկարծ չտան, կարող ե նրան խիստ սաստիկ
ցնցել։

Սալարին

Նրա պես բարի և աղնիվ մի մարդ չկա աշխարհում:
Ես տեսա, յերք վոր նա և Բասանիոն բաժանվում
ելին.

Բասանիոն տասց, — «մի քիչ կշտապեմ, վոր շուտ յետ
դառնամ»։

Նա պատասխանեց, — «Այդպես բան չանեա.
Յեվ չփչացնես գործդ ինձ համար, բարի Բասանիո.
Այնքան կաց այնտեղ, մինչև կհառնի ճիշտ ժամանակը,

Իսկ այն մուրհակը, վոր լիս տվել եմ հրեալի ձեռքը,
Թող չպղտորե քո սիրող սիրտը. քեզ ուրախ պահիր,
Յեվ ամբողջ միտքդ նվիրիր միալն

հարսնախոսության,

Սիրո ալնպիսի ազնիվ ցույցերի,
Ինչպես քեզ պատշաճ յերկա այնտեղ»,
Յեվ այդ ասելիս՝ աչքերն արցունքով լցված լինելով՝
Դեմքը շուռ տվեց, և ձեռքը փաթեց նրա մեջքի
2ուրջ.

Յեվ սքանչելի զգայուն սիրով
Իր բարեկամի ձեռքը պինդ սեղմեց.
Յեվ բաժանվեցին այդպես իրարից:

Սոլանիո

Կարծես աշխարհը նա Բասանիուի համար և սիրում,
Յեկ, գնանք, խնդրեմ, և գտնենք նրան
Յեվ մի վորեւ լավ զվարձությամբ
Փարատենք նրա սրտի թախիծը:

Սալար Շո

Այս, յեկ գնանք!

Գնում են

ՏԵՍԱՐԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ

Բելմոնտ, մի սրահ Պոբցիայի տանը
Մանում են ներիոան և մի ժառա

Ներիստ

Շնուտ, շրուտ, խնդրում եմ. իսկուն լիս քաշիր
վարագույրները.

Արագոնի տերն արդեն լերդվել եր,
Յեվ այս բոպելիս կգա ընտրելու:

Փողեք գալիս են Ա. ը ա դ ո ն ի ի շ լ ա ա ն ը
և Պ ո ր ի ա ն ի բ ե ն ց հ ե ա կ ո ր դ ն ե ր ա վ

Պորցիո

Տեսեք, այնտեղ են այն լերեք տուփը, հարդելի իշխան,
Յեթե ընտրեք այն, վորի մեջն եմ լիս,
Մեր ամուսնության ծեսերը իսկուն պետք եկատարվեն.
Իսկ թե վրիպեք, ազնիվ տեր, պետք ե առանց
մի խոսքի
Մեկնեք ալստեղից:

Արագոնի իշխան

Այս, լերդումով պարտք եմ ստանձնել պահել
լերեք բան.
Առաջին, չասել վոչ վորի՝ թե լիս վոր տուփն եմ
ընտրել
Յերկրորդ, ընտրությամբ լեթե վրիպեմ,
իմ կյանքում մեկ ել վոչ մի աղջկա ձեռքը չխնդրեմ.
Յեվ յերբորդ. լեթե բախտս չողնե ինձ իմ
ընտրության մեջ,
Զեզ հրաժեշտ տալ և իսկուն մեկնել:

Պորցիո

Ով վոր անարժան իմ անձի համար վիճակ և հանում.
Յերդում և անում այդ պայմանները անխախտ պահելու:

Արագոնի իշխան

Յես ել պատրաստ իմ: Բախտավորություն իմ
սրտի հույսին:

— Վոռկի և արծաթ և անպետք կապար,
«Ով վոր ինձ ընտե, պես ե ինձ համար
Տա յեվ վտանգու իր ամբաղջ զույլը»:
Ալեփ սիրուն պետք ե լինելի՞,

Վոր ամրող զույլը քեզ համար տալի կամ վտանգելի:
Լավ, ինչ և ասում վոսկեղեն տուփը. այս մեկը տեսնենք:
«Ով վոր ինձ ընտե, կտանի ինչ վոր տատերի իդան ե»
Շատերի իդը. «Չատեր»ը հիմար ամրոխն ե,
Վոր միշտ տարլում ե արտաքրն տեսքով
Յեկ չի հմանում ավելի քան այն,
Ինչ սովորեցնում ե հիմար աչքը.
Վոր էերեք ներսը չի հետազատում, ծիծեռնակի պես՝
Բոււնը շինում ե բացովիյա տեղում, միշտ դրսի պատին,
Միշտ փորձանքի մեջ և ճամրի վրա:
Վոչ, յես չեմ ուզում ընտրել այն, ինչ վոր շատերի
 իդն ե.

Չեմ ուզում լինել գաղափարակից հասարակ մարգանց.
Դասվել բարբարոս ամբոխի շարքում.
Յես քեզ եմ գալիս, արծաթ գանձարան.
Մեկ ել ասա ինձ տիտղոսդ ինչ ե:
«Ով վոր ինձ ընտե, կտանա՝ ինչին վոր արժանի յե»:
Յեկ լավ ե ասված: Ինչու մարդ ճգնի իր բախտը խաբել,
Յեկ հասնել պատվի, յերբ արժանիքի դրոշմ չի կրում.
Թող չհավակնի վոչ վոք ստանձնել մի իշխանություն,
Թե արժանի չե: Ո՞հ, յերանի թե դիրք, պաշտօն

ու վառք

Կեղծ միջոցներով ձեռք չբերվելին,
Յեկ անրիծ պատիմս սուացվեր սիալն
Պատիվ կրողի արժանիքներով, և այն ժամանակ՝

Վորքան գլուխներ, այժմ անգլխարկ, պետք ե
 ծածկվելին,
Յեկ վորքան մարդիկ, վոր հրամայում են, պետք
 ե լսելին,
Վորքան ստորին, չնչին սամկություն պետք ե դուրս
 նետվել
Ճշմարիտ պատվի սերունդի միջից.
Յեկ վորքան պատիվ պետք ե վեր հանվեր
Ճամանակների ավերածության և հարդի միջից,
Յեկ նոր փայլ առներ: Բայց գամ ընտրությանս,
«Ով վոր ինձ ընտե, կտանա՝ ինչին վոր արժանի յե»:
Հնդունում եմ այն, ինչին արժան եմ,
Տվեք ուրեմն ինձ սրա բանալին,
Յեկ անմիջապես թող բախտս բացվի:
Բաց ե անում արծաք տուփը

Պարզիա

Շատ մեծ հապաղում գտածիդ համար:

Սրազնեի իօխան

Այս ինչ եմ տեսնում. մի խենթի պատկեր,
Աչքով ե անում, և մի թղթիկ ե ինձ առաջարկում:
Կարգամ գրվածը: Վորքան տարրեր ես զու Պորցիայից.
Վորքան տարրեր են և իմ հույսերը իմ արժանիքից:
«Ով վոր ինձ ընտե, նա կտանա այն, ինչին վոր արժե»:
Միթե ալելի արժանիք չունեմ մի խենթի գլուխց,
Այսքան ե գինս. միքան են միայն արժանիքներս:

Պարզիա

Հանցանքն ուրիշ ե, գատելը՝ ուրիշ:
Յերկու դերեր են իրար հակառակ:

Արագոնի իշխան (կարդում ե)

Ճիշտ յոթ անդամ հնոցի մեջ
Հուրը սրան փոքձել ե.
Այն խելացին, վոր ճիշտ ընտրի,
Յոթ բռվից ել անցել եւ
Շատ մարդիկ կան պատրանք սիրող,
Նրանց բախտը ստվեր ե.
Հիմար շատ կա արծաթազոծ,
Սա ել նրանց ընկեր եւ
Ինչ կին ել վոր աւդիս առնել՝
Քեզ հարմարը լոկ յես եմ,
Դեհ, շուտ արա, ճամբա ընկիր,
Դնաս բարով քեզ ասեմ:

Ավելի խենթ կլինեմ,
Ցեթի լուռուն չմեկնեմ:
Մի խենթ զլութ ունեյի
Այն ժամանակ, յեթք յեկա,
Իսկ հիմա, յերբ մեկնում եմ,
Մեկի տեղը յերկուս կատ
Մնաս բարով, Տիրուելի,
Ցերգումս լավ կպահեմ:
Ցես իմ բախտի խստությունն
Համբերությամբ կտանեմ:

Ա բ ա գ ո ն ի իշխանը մեկնում ե իր շքախմբով

Պարցիա

Այսպես. ճրագը թիթեռին ալրեց:
Այս տրամաբանող խենթերն՝ ընտրելիս՝
Խելք բանեցնելով՝ խաղը կորցնում են:

Ներիսա

Այն հին առածը շատ պատվական ե,
«Կին ու կախաղան կույր բախտի բան են»:
Մտնում ե մի ծառա

Ծառա

Որիորդը մէր եւ

Պարցիա

Այստեղ. պարոնը ի՞նչ ե հրամայում,

Ծառա

Ազնիվ որիորդ, մի Վեհափեկցի տղա նոր հասավ
Զեր դռան առաջ, նա իր տիրոջից առաջ ե ընկել
Նրա գալուստը հայտնելու համար:

Իր տիրոջ կողմից շատ շոշափելի վողջույն ե բերել,
Այսինքն բացի քաղցր խոսքերից և հարգանքներից,
Շատ լավ ընծաներ Յերեք չեմ տեսել
Այսքան սիրելի սիրային դեսպան:
Յերեք չի լոկել այնքան համելի ապրիլան մի որ՝
Ավետիս աալու, թե մոտենում ե փարթամ ամառ,
Ինչպես այսպիսի մի առաջընթաց՝ տիրոջ առջեկից:

Պարցիա

Հերիք ե, խնդրեմ. այնքան գովեցիր,
Այնքան գործ դրիք տոն որվա խելքու,
Վոր վախենում եմ՝ քիչ հետո ասես, թե՝ ազգականդ ե:
Արի, Ներիսա, խիստ անհամբեր եմ
Հիմա կուպիտի քաղաքավարի պատգամաբերին
Տեսնելու համար:

Ներիսա

Բասանին, Տեր Սեր, յեթե քո կամ քն եւ
Դուքս են զնում

ԱՐԱՐՎԱՇ ՅԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Վեհափետիկ մի փողոց

Քալիս են Սուլանիոն և Սալարինոն

ՍՊԼԱՑԻԹ

Ասա ահսնենք, ի՞նչ լուր կա Ռիալառում:

ՍՊԼԱՑԻԹ

Դեռ համառորեն շրջում ե այն լուրը՝ թե Անտունիոնի նավիրից մեկը՝ շատ թանգագին ապրանքով՝ ընկղմվել ե Նեղուցում. Տիզի անունը կարծեմ Գուղվինս ե, խիստ վտանգավոր մի ծանծաղուտ ե, վոր շատերի տունն ե քանդել, և ուր, ինչպիս պատմում ոն, շատ մեծ նավիրի կմախքներ կան թաղված, յիթե միայն շաղակրատ համբամու այս անգամ ճշմարտախոս մի կին լինի:

ՍՊԼԱՑԻԹ

Յանկանում եմ վոր նա այս գեպքում ավելի ստախոս լինի, քան զանջաֆիլ կրծող բոլոր սանամերները կամ այն պառավնիրը, վորոնք իրենց հարեաններին ուղում են հավատացնել, թե իրենց լերը ըստ ամուսնու մեռնելու ժամանակ լաց են լեզել... բայց ճշմարիտն այն ե, վոր... առանց ավելորդաբանության մեջ ընկնելու և առանց խոսակցության սովորական պողոսաւուց թեքվելու, — բարի Անտօնիոն, պարկեշտ Անտօնիոն:

Նիոն... ի՞նչ տիտղոս ասեմ, վոր նրա անվան արժանավոր ընկեր լինի...

ՍՊԼԱՑԻԹ

Դե լավ, վերջակետը դիբ:

ՍՊԼԱՑԻԹ

Հա, ի՞նչ ասացիր, Ալո, վերջաբանն այն ե, վոր նրա նավիրից մեկը ընկղմվել ե:

ՍՊԼԱՑԻԹ

Յերանի թե հենց այդ լինի նրա վերջին կորուստը:

ՍՊԼԱՑԻԹ

Շուտ ասեմ՝ ամեն, գուցե ստանան աղոթքս ընհատե, Վորովհետե ահա գալիս ե նա՝ մի հրեալի կերպարանքով:

Գալիս ե Շայլոկը

Հա, ի՞նչ կա, Շայլոկ, ի՞նչ լուր վաճառականների մոտ:

Շայլոկ

Ի հարկե գիտեք աղջկաս փախչելը, ի հարկե գիտեք, ձեզանից լավ ել ով կիմանալ:

ՍՊԼԱՑԻԹ

Ճիշտ ե, յես ճանաչում ելի այն դերձակին, վոր աղջկագ համար շինեց թեկր, վորոնցով նա թռավ:

ՍՊԼԱՑԻԹ

Յեվ Շայլոկը շատ լավ գիտեր, վոր թոչնակը թե եր հանել, այդ թռչունները բոլորն ել այնպիս են ստեղծված, վոր պետք ե մի որ բույնից թռչեն:

Շալոկ

Անիծվի նա իր արարքի համար,

Սալարին

Այո, կանիծվի, յեթե դատավորը սատանան լինի:

Շալոկ

Իմ սեփական միս ու արյունս ըմբռստանմ...

Սոլանին

Թուհ յերեսիդ, ծեր շնւն, այդ տարիքիդ մեջ ել
արյունդ ըմբռստանմմ եւ

Շալոկ

Ասում եմ աղջիկս իմ սեփական միս ու արյունս եւ

Սալարին

Քո և նրա մսի միջև ավելի մեծ տարբերություն
կա, քան թե սև ուլունքի և փղոսկրի միջև. ավելի
մեծ զանազանություն կա քո և նրա արյան միջև,
քան թե կարմիր և հունոսյան գինիների միջև. Բայց,
ասա տեսնենք, դու ել լսել ես, վոր Անտոնիոն ծովի
վրա կորուստ ե ունեցել:

Շալոկ

Այդ ել ինձ մի ուրիշ ֆնաս, Այդ սնանկը, այդ
շումնը, վոր հիմա չի համարձակվում մարդկանց աչքին
յերեալ Ռիալոյում. այդ մուրացկանը, վոր այսպես
կոկիկ, հագնված շուկա յեր գալիս, թող իր մուրհակը
չմոռանա. վաշխառու յեր կանչում ինձ, թող մուրհակը
չմոռանա, Քրիստոսի սիրուն փող եր պարտք տալիս,
թող մուրհակը չմոռանա:

Սալարին

Բահ, վաստահ եմ, յեթե նա ժամանակին մուրհակը
չհանգնի, դու հո նրա մսից չես կտրելու. Ի՞նչ բանի
յե պետք:

Շալոկ

Չուկ բռնելու խայծ կլինի. վոչնչի ել պետք չիմ-
նի իմ վրեժին գոնե հագուռդ կտաւ ինձ խալտառակ
եր անում. Կես միլիոն շահից զրկել ե ինձ. մվասներիս
վրա ծիծաղում եր, վաստակներս ծաղրում, ազգս ա-
նարդում եր, առևտուրս խանգարում եր, բարեկամնե-
րիս սառեցնում եր, չարեկամներիս բորբոքում եր, Յեկ
ի՞նչ պատճառով. այն՝ վոր յես հրեա իմէ: Ի՞նչ ե,
հրեան աչք չունի՞, հրեան ձեռք չունի՞, որդաններ
չունի՞, անդամներ, դգայարաններ, հակումներ, կրքեր
չունի՞. Նույն կերակրով չի սնվում. Նույն դենքերով
չի վիրավորվում. Նույն հիվանդություններին յեն-
թակա չե. Նույն դեղերով չի բժշկվում. ամառը չի
շոգում, ձմեռը չի մրսում, ձիշտ այնպես, ինչպես
քրիստոնյան: Յեթե մեղ ծակոտեք՝ արյուն չի դուրս
գա, յեթե խտղտացնեք՝ չենք ծիծաղի, յեթե թու-
նավորեք՝ չենք մեռնի. յեթե մեղ անարգեք՝ չպիտք
ե վրեժխնդիր լինենք: Յեթե ուրիշ բոլոր բաների
մեջ ձեղ նման ենք՝ այդ բանով ել ձեղ նման ենք:
Յեթե մի հրեա մի քրիստոնյայի չարություն անի,
ուր ե քրիստոնյայի անհիշաչարությունը: Վրեժ: Յե-
թե մի քրիստոնյա մի հրեայի չարություն անի՝ ի՞նչ
պետք ե լինի նրա անհիշաչարությունը՝ քրիստոնյայից
որինակ վերցնելով, չի վոր վրեժ: Ի՞նչ անպիտանու-
թյուն, վոր ինձ սովորեցնես, յես ել նույնը գործ կդնեմ.

և ինձնից վատ մարդ չլա՞ յեթե սովորեցրածի վրա մի
բան ել չավելացնեմ:

Գալիս և Անտոնիոյի ծառան

Ծառան

Պարոններ, իմ տերս, Անտոնիոն, տանն եւ ցան-
կանում եւ ձեզ յերկուսիդ տեսնել:

Սալարինօ

Մենք ամեն տեղ փնտրում ենինք նրան:

Գալիս և Տյուրալը

Թօլոնիոն

Ահա մի յերկրորդը նույն ցեղից, յերրորդը գտնել
սրանց զուգակից՝ անկարելի կլինի, յեթե ինքը սա-
տանան հրեա չդառնա:

Սոլանիան, Սալարինոն յեվ ծառան գնում են

Շալանի

Ի՞նչ կա, Տյուրալ, ի՞նչ լուր Զենովալից. աղջկաս դամբը:

Ցյուրալ

Շատ տեղերով անցա, ուր նրան տեսել ելին, բայց
չէարողացա դտնել.

Շալանի

Վայ, վայ, վայ, վայ, ադամանդս գնաց. յերկու հազար
գուկատ եր նստել ինձ ֆրանկիքուրտում: Անհեծքը նոր
ե թափվում մեր ազգի զլախն. յես յերբեք այդ այն-
պես չեմ զգացել ինչպես հիմա: Յերկու հազար դու-
կառ ալդտեղ, և գեռ ուրիշ թանգարին, անգին գո-

հարներ, Յերանի՛ աղջիկս մեռած ընկներ վոտքերիս
առաջ գոհարներն ականջին: Յերանի թե պատանված
ընկներ վոտքերիս առաջ և դուկատնելու դագաղի մեջ:
Վհչ մի լուր. վոչինչ. և դեռ, ով գիտե, վորքան ել
ծախք արած կլինես՝ փնտռելու համար: Վայ, վայ,
մսաս մսասի վրա. աւսքան գողը տարավ, այսքան ել
գողին գտնելու համար. և վհչ մի գոհացում, վհչ մի
վրեժ, ամեն մի ձախորդություն պիտք ե հենց իմ
գլխին գա, ամեն հառաջանք հենց իմ կրծքից պիտք
ե դուրս գա, և ամեն արտասուք, հենց իմ աչքերից:

Ցյուրալ

Այս, ուրիշներ ել կան դժբախտության հանդիպած,
որինակ՝ Անտոնիոն, ինչպես Զենովալում լուցի...

Շալանի

Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ անբախտություն, անբախտություն:

Ցյուրալ

Նրա մեծ նավերից մեկը, վոր Տըիպուիկց եր գա-
լիս, խորտակվել եւ:

Շալանի

Փառք քեզ, աստված, վիառք քեզ. ճշմարիտ եւ, ճիշտ եւ:

Ցյուրալ

Յես ինքս խոսեցի այդ նավի մի քանի նավաս-
տիների հետ, վորոնք նավարեկությունից աղատվել
ելին:

Շալանի

Ծնորհակալ եմ, սիրելի՛ Տյուրալ, բարի՛ լուր, բարի
լուր, հա, հա, Ո՞ւր, Զենովալիմ:

Տյուբալ

Ինչպես լսեցի, աղջիկդ Զենովայում մի գիշերվա
մեջ ութսուն դուկատ և ծախսել:

Շայլոկ

Այս, դու դաշնայն ես խըռում սիրտս: Ել փողերիս
յերեսը չեմ տեսնի:
Ութսուն դուկատ մի գիշերվա մեջ, ութսուն դուկատ:

Տյուբալ

Անտոնիոյի պարտատերերից մի քանի հոգի ինձ հետ
Վենետիկ յեկան.

Յերդվում են, վոր Անտոնիոն անպատճառ կոտր կընկնի:

Շայլոկ

Ինչպես ուրախ եմ. այնքան տանջեմ նրան, այնքան
չարչարեմ,
վոր... ինչպես ուրախ եմ:

Տյուբալ

Հենց նրանցից մեկը մի մատանի ցույց տվեց
ինձ, վոր առել եր քո աղջկանից, տեղը մի կապիկ
տալով:

Շայլոկ

Կրմէ թափվի գլխին: Դու ինձ չարչարում ես,
Տյուբալ: Իմ փիրուղան եր, իշան եր ինձ տվել, յերբ
դեռ չեյի ամուսնացել: Մի ամբողջ հոտ կապիկների
հետ յես չեյի փոխի այն:

Տյուբալ

Բայց Անտոնիոն հաստատ անաքանդ ե յեղել:

Շայլոկ

Հմ, ճիշտ ե, ճիշտ ե: Գնա, Տյուբալ գնա մի դատա-
րանի բարապան գտիր ինձ համար. տասնենինդ որ
առաջ պատվիրիր. յեթե դրամը ժամանակին չվճարե,
պետք ե սիրու դուրս պոկեմ: Յեթե նա Վենետիկում
չլինի, ինչ առետուր վոր ուզեմ՝ կարող եմ անել: Գնա,
գնա, Տյուբալ, և հետո յեկ, ինձ Սինագոգում գտիր:
Գնա, բարի Տյուբալ, Սինագոգում, Տյուբալ

զնում են

ՏԵՍԱՐԱՆ ՑԵՐԿՈՐԴ

Բելմոնտ. մի սրահ Պոբցիայի տանը
Մանում են Բառանիոն, Պոբցիան,
Քը տցիանիոն, Ներկուան և ծառաներ

Պօրցիա

Կացեք, խնդրում եմ. փորձելուց առաջ մի յերկու որ ել
Դեռ սպասեցեք: Սիսալ ընտրելով՝
ինձ կզրկեք ձեր ընկերությունից: Սպասեցեք մի քիչ:
Սիրտս առում ե, — թիես սեր չե ալդ, —
թի ձեզ կորցնել չեյի կոմենատ. և շատ լավ գիտեք,
Վորատելությունն այդպիսի խորհուրդ չի տալիս յերբեք:
Սակայն գուցե դուք ինձ չհասկանաք, —
— Բայց լեզու չունի մի սիրող աղջիկ, այլ միայն
իսոներ, —

Պիտի ուզելի մի յերկու ամիս պահել ձեզ ալստեղ,
Նախքան ինձ համար վիճակ հանելիք:
Յես կարող ելի սովորեցնել ձեզ, վոր ուզիդ ընտրեք.
Բայց դա կլիներ իմ խոստման դրժում,

Յես ուխտագրուժ չեմ լինի յերբեք,
Այսպես ուրեմն գուցե վրհպեք.
Բայց յեթե վրիպէք, յերանի կտամ վոր մեղք դործեցի,
Այսինքն ուխտո դրժած լինելի:
Այս, ձեր աշքերը, նրանք ինձ գլութել և ինձ
կլսել են.
Եեկ կեսս ձերն ե, մյուս կեսս... ձերն ե.
Ուղեցի ասել՝ մլուս կեսս իմն ե.
Բայց յեթե իմն ե, ուրեմն ձերն ե. բոլորը ձերն ե.
Անպիտան ախարհ, վոր թումբ և դնում
Իրավատերի և նրա արդար իրավունքի մեջ:
Այսպիս ուրեմն, թեե յս ձերն եմ, դարձալ ձերը չեմ:
Յեթե չլինեմ ձերը, թող բախտի գլմին հուր թափվի,
վոչ թե իմ զլմին:
Ի՞նչ շատ եմ խոսում, բայց շատ եմ խոսում,
Վոր դանդաղեցնեմ այս ժամանակը, ձգեմ, յերկարեմ,
Այդպես ուշացնեմ ձեր ընտրությունը.

Թասանիո

Թողեք, վոր ընտրեմ.
Այդպես ինչպես կամ, ցավի անիվին կտաված եմ
կարծես:

Պարցիս

Ցավի անիվին. Բասանիո, ուրեմն խոստովանեցէք,
Թե՛ ձեր սիրո մեջ ի՞նչ դավ և խառնված:

Թասանիո

Վոչ մի դավ, բացի անվատահության այն տգեղ
դավից,
Վոր վախ և տախ՝ թե չարժանանամ սրտիս փափագին:

Այսքան կարող ե ձյունի և հրի միջև սեր լինել,
Վորքան կարող ե դավաճանություն լինել սիրուս մեջ:

Պարցիս

Բայց վախենում եմ, վոր դուք տանջլածի խոսքեր
եք ասում,
Յերբ մարդ ամեն բան կամե ստիպված:

Թասանիո

Կյանք խոստացեք ի՞նձ, և յես ամեն բան կխոստովանեմ:

Պարցիս

Խոստովանեցէք և կյանք կստանաք:

Թասանիո

Յեթե ասելիք՝ խոստովանեցէք և սեր կստանաք,
Հենց այդ կլիներ խոստովանանքիս բուն եյությունը:
Անուշ չարչարանք, յերբ չարչարող
Պատասխաներ և դնում բերանս, վոր ինձ ազատե:
Բայց դիմեմ բախտիս և այս տուփերին:

Վարագայբները յետ են բաշում տուփերի առջելից

Պարցիս

Առաջ, ուրեմն, դրտնցից մեկում յես եմ ամփոփած.
Յթե սիրում եք՝ դուք ինձ կտանեք:
Յետ կաց, Ներխաս, և դուք ամենքդ, մեկ կողմ
քաշլցեք.

Թող հնչի նվադն, յերբ նա ընտրում ե,
Վոր, յեթե վրիպի, կարապի նման վախճան ստանա
Յեկ անհանա յերաժշտությամբ.

Համեմատությունն ավելի լրիվ դարձնելու համար՝
Ասեմ, թող աչքերս դառնան լճակներ,
Ձրե անկողին, ուր նա հոգին տա:
Բայց գուցե շահի, և այն ժամանակ ի՞նչ ե նվազը:
Նվազն ալդ դեպքում հենց այն ցնծալից շեփորածայնն ե,
Յերբ հավատարիմ հպատակները գլուխ են տալիս
Նոր թագաղրված իրենց արքային. —
Կամ ախորժալուր այն հնչյուններն են, վոր արևեծագին
Զարթեցնում են մեղմ, անուշ անուրջով քնած փեսային
Յեվ հրավիրում դեղի հարսանիք:
Գնում ե հիմա նա նույնքան հողարտ,
Բայց շատ ավելի սիրալից սրտով, քան Ալիդեսը,
Յերբ նա աղատեց հեծող Տրոյան՝ ծովի հրեշին
Կույսեր հանձննելու մշտական առուրքից: Յեվ զոհը յես եմ,
Իսկ կանգնածները՝ Դարտանյան կանաչը, վորոնք
լեկել են
Լալագին դեմքով պատքարի յելքը դիտելու համար:
Գնա, չերկուկես, ապրիր և կապրեմ.
Յես շատ ավելի անձկալից սրտով նայում եմ կովին,
Քան դու, վոր հիմա կռվի յես գնում:

Անշում ե յերաշուրքյունը. մի յարտ, միջ թատակոն զննութ և
Վիճակահանության տուփերն յեվ խորհում

Յերգ

Տարփանքն ուր ե սկսվում,
Աբդուք զլիստմ, թի՛ սրտում,
Այստեղ ինչպես ե ծնվում.
Յեվ ինչով ե նա սնվում.
Պատասխան տուր,
Պատասխան:

Աչքերում ե նա ծնվում,
Հայացքներով ե սնվում.
Ուր ծնվում ե, այստեղ նա
Հանգչում ե, վոր մահանաւ
Թող ամենքս միահանգ
Հնչեցնենք մի մահաղանգ:
Յես սկսեմ, — գինզը-դանդ:

Ամենինը

Դինզը-դանդ, մահաղանգ:

Բասանիս

Արտաքին տեսքը շատ քիչ անդամ ե ներսին
նմանվում.

Աշխարհն անդադար խարվում ե դարդից:
Ուրենքի առաջ կմ արդյոք մի դատ,
Վորքան ել զաղիր, անարդար լինի,
Վոր ախորժելի մի ձայնի կողմից գովարանվելով,
Իր չար յերեսը չըստվերապատե,
Յեվ կրօնի մեջ վրեն ե այն անարդ մոլորությունը,
Վոր խոժոս դեմքով մի կրօնավոր չսրբագործե,
Զվալերացնի այդ մի սրբազն վկայությամբ ել՝
Վարագուրելով տգեղությունը գեղեցիկ զարդով:
Զկա մեղ հայտնի վոչ մի մոլորություն, վոր արտաքինից
Առաքինության նշան չունենա: Վորքան յերկչոտներ,
Վորոնց սրտերը ավազի նման փուխր ու խախուտ են,
Մի չերկուլեսի կամ գոռ Արեսի մորուք են կրում,
Բայց նրանց ներաը յեթե քննե մարդ՝
Կաթի պես ձերմակ լիարդ կզանե.
Նրանք քաջության մազեր են պահում
Վոր վախկոս դեմքին ահարկու տեսք տան:
Հիմա դիտեցիք գեղեցկությունը,

Կտեսնեք, վոր նա շինծու յի, գնված.
Բնությունն այդտեղ հրաց և գործում.
Խնչքան վոր կանայք ծանր են պանանքով, թեթև են
բարքով.
Այսպես, այն գանգուր և ոճագալար վոսկի վարսերը
Վոր սիրուն կարծված մի կնոջ գլխին
Խաղում են ուրախ զեփուռների հետ,
Հաճախ ոժիտն են մի յերկորդ զլսի,
Իսկ նրանց սնող իսկական գանցը գերեզմանումն եւ
Այսպես՝ պանանքը խարդախ յեզերքն և մի խիտ
նենգ ծովի.

Շքեղ շղարշն ե, վոր քողարկում և հնդիկ գեղուհուն.
Մի խոսքով պանանքն այն առերկույթ
ճշմարտությունն ե,
Վոր միշտ հագնում ե ճարպիկ աշխարհը՝
Նուինիսկ ամենից խելացիներին վորսալու համար,
Ուրեմն, ով գու, շողլողուն վոսկի,
Կարծը կերակուր արքա Միդասի, չեմ ուզում լես քեզ.
Վոչ ել քեղ, արծաթ, գոեհեկ ստրուկ
Վոր վազ ես տալիս մի ձեռքից մյուս: Բայց դու,
սին կապար,

Դու վոր ավելի սպառնացող ես, քան թե խօստացող,
Քու գունատ տեսքը ազդում ե վրաս
Ավելի քան թե պերճախոսություն,
Քեզ եմ յես ընտրում, և արդյունքը թող
ցնծություն լինի:

Պորցիա

Ի՞նպես իմ բոլոր մէուս հուղումները ցնդում են,
կորչում՝

Կասկածոտ մտքեր, շտապ վերահաս հուսահատություն,
Դողահար յերկյուղ, նախանձուտություն՝ կանաչ
տչքերով.

Ո՞վ սեր, սանձիր քեզ, հափշտակությունդ ամոքիր
մի քեչ
Ուրախությունդ չափով անձրեիր,
Մեղմիր դու այսքան չափազանցություն,
Թո որհնությունը առատ եմ զորմ, պակաս արա ալդ,
Գուցե հենց դա ինձ արբեցում բերի:

Ռառանիօ (քանալվ կտպարե տուփը)

Այս լինչ եմ գտնում. չքնաղ Պորցիայի չքնաղ
պատկերը.
Վոր կիսաստվածն ե ալսքան մոտեցել Արարչի գործին.
Իրոք շարժուն են այս զույդ աչքերը
Թե իմ աչքերի բիբերին հսծած շարժուն են թվում:
Ահա բաց շուրթեր՝ շաքարե շնչով իրարից զատված,
Այսպիսի քաղցր բարեկամների
Հենց մի ալսպիսի քաղցր անջրպետ պետք ե բաժաներ:
Ահա, նկարիչն այս մաղերի մեջ մի սարդ ե դարձել
Յեկ նկարելիս հյուսել ե մի ցանց՝
Մարդկանց սրտերը ավելի արագ ծուղակ ձգելու
Քան այդ անում ե սարդի վոստախնը թուլ մժեղներին,
Յեկ այս աչքերը. նկարիչն ինչպես ե կարողացել
Նաև այդ աչքերն, իերբ նկարել ե.
Յերբ նա մեկ աչքը նկարած լիներ՝ միայն ալդ մեկը
Պետք ե գրավեր իր յերկու աչքը,
Յեկ ինքն անընկեր մնար նկարված:
Յեկ սակայն տեսեք, ինչքան գովեստս անբավարար ե
Նրա սավերի գնահատության:

Նույնքան ստվերը յետև և մնում իր իսկականից:
Ահա և թուղթը, բախտիս ամփոփումն և ելությունը,

(Կարդում ե)

Դու տեսքից չդատեցիր,
Ամենից լավ զատեցիր.
Միշտ այդպես լավ բախտը քեզ
Ժամա և գու ճիշտ ընտրես.
Արդ յերբ բախտը քեզ ժպատց,
Ել մի փնտռիր, ուրախ կաց.
Յեթե գոն ես գու սրտով
Յեզ յերջանիկ այս բախտով,—
Շուա որիորդին մոտեցիր,
Յեզ համբույրով տեր դարձիր:

Անուշենկ թղթիկ, — Զքնաղ որիորդ, ձեր

թուլտվությամբ,

Այս գրով ահա գալիս եմ համբույր տալու, առնելու:
Յերբ մարտնչում են յերկու ախոյան մի մըցումի մէջ,
Նրանցից մեկը, հաղթանակող՝ մտքերով տարված
Յերբ լսում ե ծափ ու կեցցեների շաչ ու գոչյունը,
Նալում և ապշած, մտքով մոլորված և դեռ չգիտե
Թե այդ գովեստի վորոտումները իրենն են, թե վոչ.
Ճիշտ նույնպես յես ել, չքնաղ որիորդ, կանգնած եմ

ալստեղ,

Տարակուսում եմ թե այս տեսածս իրավ և արգլոք,
Մինչև վոր դուք ալդ կընքեք, հաստատեք և
վալերացնեք:

Պորցիա

Դուք ինձ տեսնում եք, սինիոր Բասանիո, կանգնած
ձեր առաջ

Այնպես, ինչպես կամ: Թեպետ և ինքս միայն ինձ
համար զելի կամենա վառասեր լինել, ավելին տենչալ
Յեզ այս յեղածից ավելին լինել, սակայն ձեզ համար
Կցանկանալի դեռ հարլուր անդամ ավելին լինել
Քան թե հիմա յեմ, յեզ հազար անդամ տվելի սիրուն,
Տասն հազար անդամ ավելի հարուստ, և այդ բոլորը,
Միայն ձեր աչքին ավելի բարձր դասվելու համար:
Յես կցանկալի ձիրք ու շնորհքով, իմ

գեղեցկությամբ,

Իմ հարստությամբ, բարեկամներով շատ շքեղ լինել,—
Բայց արդ, յեղածի հանրագումարը փոքրիկ գումար ե,
Վոր վայր ի վերո հաշվելով այս ե,—

Մի անուս աղջիկ՝ անվարժ ու անփորձ,

Միայն յերջանիկ, վոր այնքան ձեր չե, վոր չսովորի,
Յեզ ել ավելի յերջանիկ, վոր գեթի ծնե այնքան

Անմիտ չի յեղել, վոր սովորելու անկարող լինի:

Յեզ բոլորից շատ այժմ նրանով ե նա յերջանիկ՝
Վոր իր հեղ հոգին լինթարկում ե ձեզ՝ զեկավարելու,
Ինչպես իր տերը, կառավարիչը և թագավորը:

Անձս և կալքս փոխանցվում են ձեզ և ձերն են դառնում.

Մինչև այս ըոպեն յես ելի տերը ալպ պերճ պալատի,
Յես ելի տերը իմ ծառաների, ինքս իմ թագուհին.

Բայց այս ըոպելից այս տունն ու տեղը, այս

ծառաները

Բոլորը ձերն են, ձերն եմ յես ինքս հիմա, ով իմ տեր.

Այդ բոլորը ձեզ այս մատանիով.

Վորից յերբ և ե յեթե բաժանվեք, կամ այն կորցնեք՝
Կամ տաք ուրիշին՝ թող նշան լինի ձեր սիրո մահվան
Յեզ ինձ իրավունք տա, վոր այդ դեպքում յես ձեզ՝
մեղադրեմ:

Թասանիո

Ողիորդ, դուք ինձ զրկել եք խոսքի ունակությունից.
Հիմա արյունս ե միայն խոսում ի՞չ յերակների մեջ,
Յեզ մի այնպիսի շփոթ ե հիմա ընկել իմ հոգում,
Ինչպես սիրելի մեր թագավորի ասած ճառից վերջ
Ամբոխն ե լինում հուղված, շփոթված ու մրմնջում ե.
Յերբ շնորհը միասին առած
Դառնում են թագուն կամ արտահայտված
ցնձությունների

Մի շքեղ քառա:

Յերբ այս մատանին զատվի իմ մատից,
Կյանքն ել հենց ալդ որ ինձնից կզատվի,
Յեզ այն ժամանակ կարող եք ասել՝ «Բասանիոն
մեռավ»:

Ներխսա

Տեր և տիրուհի, մեր հերթն ե հիմա,
Մենք վոր լուս կանգնած տեսարումը
մեր իդձերի,
Տեր հերթն ե կոչել՝ — բախտավոր լինեք, Տեր և
Բախտավոր լինեք:

Գրացիան

Տեր իմ Բասանիո, և ազնիվ տիկին,
Ցանկանում եմ ձեզ յերջանկություն, անսպառ
բերկրանք,
Վորն անշուշտ դուք ել ինձ եք ցանկանում,
Յեզ յերբ ձեր սիրո դաշինքը վճռեք հանդիսավորել՝
Խնդրում եմ թույլ տաք, վոր հենց նույն որը յս ել
պսակվեմ:

Թասանիո

Իմ ամբողջ սրտով՝ լեռը մի կին գտնես:

Գրացիան

Շնորհակալ եմ ձեզանից, Տեր իմ, այդ ել դուք տվիք:
Իմ աչքս նույնքան արագատես ե, ինչքան վոր ձերն ե.
Դուք, ազնիվ Տեր իմ, տեսաք տիրուհուն, իսկ յս՝
նաժիշտին.

Դուք ել սիրեցիք, յս ել սիրեցի.

Ժամանակ վատնեն անհարմար եր ինձ, տեր իմ,
ինչպես ձեզ.

Այս տուփերից եր կախված ձեր բախտը,

Նույնպես և իմը, ինչպես յերևաց:

Յս ալսուղ այնքան սիրաբանեցի, վոր քրտնեցի.

Այնքան յերդվեցի, վոր սիրո ուխտից քիմքս

ցամաքեց,

Մինչև վերջառես այս սիրունիկից ստացա խոստում,

— Յեթի խոստումը վերջնական բան ե, — եր սիրտն

ինձ տալու,

Պայմանով միայն, վոր իր Տիրուհին ձեզ վիճակ

ընկնի:

Գրացիա

Ճիշտ ե, ներխսա:

Ներխսա

Այն, Տիրուհի, թե հավանում-եք:

Թասանիո

Իսկ դու, Գրացիանո. լմրջ ե ասածդ:

Գրացիանո

Ազնիվ խոսք, Տեր իմ:

Բառանիո

Յեթե այդպես ե, դա մեծ պատիվ ե մեր հարսանիքին:

Գրացիանո (Ներկային)

Հազար դուկատով գրազ ենք դաշլիս,
Վոր մենք կունենանք առաջին տղան:
Բայց Թվ ե գալիս. ահա Լորենցոն, իր հըեռւէին.
Բահ, վենետիկցի իմ հին բարեկամ սինիոր Սալերիոն.

Դալիս եմ Լորենցոն, Զեսիկան յեզ Սալերիոն

Բառանիո

Բարեկ, Լորենցո. բարեկ Սալերիո, բարեկ եք լեկել
Յեթե այս տան մեջ նոր շահած դիրքս իրավունք
տա ինձ

Զեղ բարի գալուստ բարեմաղթելու: Զեր
թուլլովութևամբ,

Թանգագին Պորցիա, իմ հայրենակից բարեկամներին
Բարի գալուստ եմ ասում ձեր տանը:

Պորցիա

Յեկ լես ել ձեղ հետ նույնն եմ ցանկանում, —
բարեկ եք լեկել

Լորենցո

Շնորհապարտ եմ ձեր ազնվութևան: Ինձ լեթե
հարցնեք՝

Յես միտք չունեի ձեղ այցի դալու:

Բայց հանդիպեցի լես Սալերիոյին.

Նա այնքան խնդրեց իր հետ աւստեղ գալ,
Այնքան, վոր մերժել չկարողացա:

Սալերիո

Այս, ալդուիս ե. և դրա համար սլատճառ ունիյի,
Սինիոր, Անտոնիոն բարեկում ե ձեզ:

Տալիս ե մի նամակ

Բառանիո

Նախքան կարդալս, — ասացեք, ինդրեմ,
Ինչպես ե ազնիվ իմ բարեկամը:

Սալերիո

Հիվանդ չե, Տեր իմ, այլ ընկճված ե,
Նամակը կասի նրա վիճակը:

Բառանիոն կարդում ե նամակը

Գրացիանո

Ներիսա. գնա, այս ոտարուհուն լավ հյուրընկալիք:
Սալերիո, ի՞նչ լուր կա Վենետիկից,
Ի՞նչպես ե արդիոք մեր արքունական վաճառականը,
Բարի Անտոնիոն Վատահ եմ, վոր նա մեր հաջողութևան:
Լուրը առնելով՝ շատ կուրախանա,
Մենք Յասոններ ենք, արդեն ձեռք բերինք մեր
վոսկեգեղմը:

Սալերիո

Յերանի դուք այն գտած լինելիք, ի՞նչ նա կորցրել ե:

Պորցիա

Նամակում պետք ե մի վատ լուր լիներ,
Վոր Բասանիոն իր լերեսի գունը նետեց, սպրդնեց.
Գուցե սիրելի մի բարեկամի մահվան լուրն ե այդ,
Այլապես վոչինչ չեր կարող այսպես
Այլալիլ սրտու մի մարզու հողին.
Ի՞նչ ե, ավելի ցավալի լուր ե.
Թռւլ տուր, Բասանիո, չե վոր մենք մեկ ենք,
Այդ նամակն ինձ ել լերաբերում ե:

Բասանիո

Ո՞հ, քաղցրիկ Պորցիա, այնքան անախորժ բառեր կան
ալստեղ,
Վորոնց նմանը գեռ թղթի վրա լերբեք չի գրվել:
Առաջին անգամ, լերբ լիս՝ իմ սերը խոստովանեցի,
Զեզ պարզ տապացի, վոր իմ ունեցած հարստությունը
իմ լերակներում հօսող արյունն ե: Բայց և այնպես, յես,
Ազնիվ որիորդ, ինքս ինձ այդպիս քիչ գնահատելով՝
Տեսեր թե վորքան սնապարծ եյի:
Տերբ ձեզ հայտնեցի թի կարողությունս այդքան
վոչինչ ե,
Գետք ե ասեյի վոչինչից քիչ ե, քանզի ինքս ինձ
Գրավ եմ դրել իմ ամենալավ բարեկամի մոտ,
Յեզ բարեկամի ո գրավ եմ դրել իր թշնամու մոտ,
Վոր դրամ գտնեմ: Ահա մի նամակ, ազնիվ որիորդ,
Վորի թուղթն, ասես, իմ բարեկամի մարմինը լինի,
Յեզ ամեն մի բառ՝ լայներախ մի վերք,
Վորից հոսում ե նրա արլունը: Ճիշտ ե, Սալերիո,
Վոր նրա ճամբար ընկած նավերից վոչ մեկը չեկավ.
Յեզ վոչ մի նավ, վոչ Տրիտոնիից, վոչ Մեկսեկայից,

Վոչ Անգլիայից, վոչ Լիսարոնից, վոչ Բարբարիայից,
Վոչ Հնդկաստանից: Վոչ մի նավ խոյս տալ
չկտրողապակ
Վաճառականի տունը կործանող ծովի խութերից:

Սալերիո

Վոչ մի նավ, Տեր իմ. յեթե պահանջված դրամն ել
լիներ,
Ցերեկի հրեան դարձյալ չեր առնի:
Յերբեք չեմ տեսել մարդկալին դեմքով մի մարդ —
արարտձ՝
Վոր այդքան դաժան, կատաղի լիներ՝
Մի ուրիշ մարզու կործանման համար:
Գիշեր ու ցերեկ անդադար գանգատ ե անում դուքսին,
Յեզ մեր պետության ազատությունն ե նա
ամբաստանում,
Պահանջելով վոր դատաստան արվի: Վաճառականներն
Յեզ ինքը՝ դուքսը և ամենամեծ մազնիֆիկոններն
Ուզել են նրան լերկար համոզել.
Բայց վեռ վոչ մեկը չի կարողացել կասեցնել նրան
Իր այն մուրհակի, նրա առողջանքի և արդարության
Քինոտ պահանջից:

Զնսիկո

Յերբ յես տանն ելի, իմ ներկայությամբ՝ Քուշին,
Տյուբալին
Յերդվում եր հաճախ, վոր նախընտրում ե
ինքն Անտոնիոյից մի ֆունտ միս պոկել,
Քան թե ստանալ նրանց պարտքը՝ քսան անդամ

Յեղ գիտեմ, Տեր իմ, վոր յեթե որենքն,
իշխանությունը
Յեղ բռնի ուլժը չսանձեն նրան՝
Խեղճ Անտոնիոլի բանը շատ վատ ե:

Պորցիա

Յեղ ձեր սիրելի մի բարեկամն և այդ նեղության մեջ:

Բասանիո

Բարեկամներիցս ամենաթանգը, լավագույն մարդը,
Մարդկանց լավություն անելու համար
Միշտ անխոնչ պատրաստ և բարի հոգին,
Մի մարդ, վորի հին հոռվմայեցու աղնվությունը
Չունի վոչ մեկը վողջ իտալիայում:

Պորցիա

Յեղ նա ի՞նչքան և պարտք այդ հրեալին:

Բասանիո

Ճիշտ յերեք հաղար դուկատ և վերցրել այն ել ինձ
համար:

Պորցիա

Ի՞նչպես, հենց այդքմն:
Վեց հաղար տվեք, մուրհակն յիտ առեք.
Կրկնապատկեցեք այդ վեց հաղարը, յեռապատկեցեք
Յեղ մի թույլ տվեք, վոր Բասանիոլի հանցանքի
համար,

Այդքան պատվական մի բարեկամի մի մազին դպչեն:
Ամենից առաջ գնանք հիմտ մեր պսակն անել տանք,
Ճետո շուտ մեկնիր դեպի վենետիկ՝ բարեկամիդ մոտ:

Անհանգիստ հոգով չպետք ե պառկես Պորցիայի կողքին:
Ճետո դու այնքան վոսկի վերցրու, վոր կարողանաս
Այդ չնչին պարտքը վճարել թեկուզ մի քսան անգամ:
Դրանից հետո բարեկամիդ ել վերցրու բեր ալստեղ:
Մինչ այդ՝ իմ նաժիշտ Ներխան և ինս այստեղ

Կապասենք

Իբրև աղջիկներ և կամ ալրիներ:

Ուրեմն գնանք. մեր ամուսնության առաջին որը
Դեռ չվերջացած, պետք ե այստեղից ձանապարհ
ընկնես:

Բարեկամներիդ լավ հյուրասիրիր, ուրախ յերեաւ:
Հիմա վոր այսքան թանգ ես գնված դու՝ թանգ ես
ինձ համար.

Բայց բարեկամիդ նամակն ինձ համար կարդա,
լինդրում եմ:

Բասանիո (կարդում ե)

«Սիրելի Բասանիո, բոլոր նավերս փորձանքի յեն
հանդիպել, պարտատերերս անողոք են դառնում. հարս-
տությունս վոչնչացել ե, հրեային տված մուրհակիս
Ժամանակն անցել ե, ինչ վորովհետեւ տուգանքը վճա-
րելով՝ անկարելի ին. վոր կենդանի մնամ, ուստի թող
ասեմ, վոր իմ և քո միջն յեղած բոլոր պարտքերը հա-
տուցված են, միայն թե կարողանամ մեռնելուց առաջ
քեզ վերջին անգամ տեսնել: Բայց և այնպիս վարվեր,
ինչպես քեզ հաճելի յի. յեթե սերդ քեզ չի դրդե ինձ
մոտ գալու, թող այս նամակը չդրդե»:

Պորցիա

Ա՛ս, իմ սիրելի, թաղ, թաղ ամեն բան և իսկուն
մեկնիր:

Թառանիս

Քանի վոր այսօքան բարեսիրտ կերպով դու թուլ
ես տալիս։
Յես շտաղում եմ մեկնել. և մինչև իմ վերադարձը՝
Վոչ մի անկողին չի կարող պատճառ դառնալ
ուշացման,
Յեվ վոչ հանգիստ յերկուսիս միջև պատվար չի
դառնաւ։

Դուքս են զնում

ՏԵՍԱՐԱՆ ՑԵՐՇՈՐԴ

Վենետիկ. մի փողոց

Գալիս են Շայլոկը, Սալարինն, Անտոնիոն յին
քանտապահը

Շայլոկ

Բանտապահ, զգույշ. աչալուրջ հսկիր. մի խոսիր
դութից.
Սա այն հիմարն ե, վոր ձրի կերպով փող եր պարտք
տալիս։
Բանտապահ, զգույշ։

Անտոնիս

Բայց ականջ արա ինձ, բարի Շայլոկ։

Շայլոկ

Մուրհակս եմ ուզում. վոչինչ մի խոսիր իմ մուրհակի
դիմ.
Յես յերդվել եմ, վոր մուրհակում գրված տուգանքն
ստանամ.
Դու եյիր վոր ինձ, առանց պատճառի, շուն եյիր
գոչում։

Հիմա, վոր շուն եմ, ուրեմն զգույշ կաց իմ ատամներից,
Դուքսն ինձ անպատճառ իրավունք կտաւ
— Շատ եմ զարմանում. դու վատ բանտապահ և
այնքան իւենթ ես,
Վոր սրա խոսքին մտիկ ես տալիս և հետք զնում,

Անտոնիս

Խնդրում եմ, լսիր, թող մի խոսք ասեմ,

Շայլոկ

Մուրհակս եմ ուզում. չեմ ուզում խոսես.
Մուրհակս եմ ուզում. ուրեմն վոչինչ մի խոսիր ինձ
հետ։
Չես կարող դու ինձ դարձնել փափկասիրտ և տիուր
մի խենթ,
Վոր ցավակցար գլուխս որորեմ, գթամ, ախ քաշեմ,
Զիջեմ քրիստոնյա բարեխոսներին։ Մի հետեւիր ինձ.
Ի՞նչ կարիք կա զուր այսքան խոսելու. մուրհակս եմ
ուզում,

Սոլարինա

Մարդկանց մեջ յերեք այսպիսի քարսիրտ
Շուն դեռ չի յեղել։

Անտոնիս

Բաց թողեք դրան։
Ել ավելորդ ե զուր աղաչանքով դրա հետ խոսել.
Նա կլանքս ե ուզում. և շատ լավ դիտեմ թե ինչու
համար.
Յես շատերին եմ ազատել արդեն այդ տուգանքներից՝
Յերբ ինձ են դիմել, ոգնություն խնդրել.
Հենց այդ պատճառով նա ինձ ատում եւ

Սալուշին

Վստահ եմ, վոր Դուքսն այդպիսի տուգանք չի
վավերացնի.

Անոնին

Դուքսը չի կարող խախտել որենքի աղատ ընթացքը,
Յեկ մեր պետության արդարությունը կվարկաբեկվի,
Յեկ խախտվի այն առևտրի ազատությունը,
Վոր վայելում են ոտարներն ախտեղ, մեր վեճետիկում,
Յեկ քաղաքի շահն ու առևտուը
Միշտ կախում ունի բոլոր ազգերից:
Գնացեք ուրեմն, իմ այսքան ցավերն ու զասները
Ինձ արդեն այնքան հայել մաշել են, վոր վաղը հազիվ
Մի փունտ միս մնա՝ տալու արնախանձ իմ
պարտատիրոջ:
Գնանք, բանտապահ: Ա՛խ, Բասանիոն գմր,
Իր աչքով տեսներ թե յես իր պարտքը վոնց եմ
վճարում.
Յեկ այնուհետեւ ել ի՞նչչթ, փու ի՞նչ փութ:

Դուրս են զնում

ՏԵՍՄՐԱՆ ԶՈՐՐՈՐԴ

Բելմոնտ. մէ սենյակ Պորցիոյ յէ տանը
Մտնում են Պորցիան, Ներիսան, Լորենցոն,
Զենիկան և Բալթագարը

Լորինցո

Տիկին, թեպետ և անհարմար ե ձեզ ասել ալդ բանը,
Դուք աստվածային բարեկամությունն ըմբռնում եք
Ճիշտ

Յեկ վեհանձնաբար. ու դրա ցայտուն
Ապացույցն այն ե, վոր ձեր ամուսնու
Բացակալությունն այսպես տանում եք:
Յեթե իմանաք թե ումն եք անում այդպիսի պատիվ,
Թե ինչ իսկական ազնվականի ոգնության հասաք,
Թե ինչ սրտակից մի բարեկամ ենա ձեր ամուսնուն, —
Այդ դեպքում, գլուխ կհպարտանաք ձեր այս
վարմունքով
Ավելի, քան մի շատ սովորական բարեգործությամբ:

Պորցիս

Յերբեք մի բարիք գործելուս համար դեռ չեմ զղացել.
Ալժմ ել չեմ զղա: Յերբ յերկու ընկեր միասին
ապրում,
Իրենց որերը միասին վատնում,
Միասին քաշում են սիրո լուծը.
Պետք ե անպատճառ նրանց բարքի մեջ
Բնավորության, վարքի մեջ վինի մեծ նմանություն
Յեկ հենց դրանից յես յենթագրում եմ,
Վոր այն Անտոնիոն, իմ ամուսնու սերտ, լավ
բարեկամը,

Պետք ե շատ նման լինի ամուսնուս.
Յեթե այդպես ե՝ ապա ինչ չնչին ե այն վճարը
Վոր յես ավել եմ՝ այն դժոխացին անգթությունից
Հոգուս ընկերոջ փրկելու համար:
Բայց այս խոսքերս շատ են մոտենում
ինքնագովության.
Ուրեմն այդ մասին այլես վոչ մի խոսք: Ուրիշ բան
լսեք.
Լորենցո, ահա, մինչեւ ամուսնուս տուն վերադարձը

Ձեզ եմ հանձնում իմ տան տնտեսությունն ու

վարչությունը.

Իսկ յես գաղտնապես յերկնքի առաջ մի ուխտ եմ արել
ինձ նվիրելու սուրբ խոկումների և աղոթքների՝
Այս Ներխսալի ընկերակցությամբ, մինչև այն որը
Յերբ մեր յերկուսիս ամուսինները կվերադառնան։
Մի մենաստան կա, լոկ լերկու մոռն այստեղից հեռու։
Մենք այնտեղ կապրենք։ Խնդրեմ չմերժեք տանել

այս բեռլ

Վոր հարկադրում և հիմա սերս Ձեզ։

Լորենցո

Ամենայն սիրով։

Ձեր բոլոր բարի հրամաններին յես հնազանդ եմ։

Պորցիա

Ծառաներն արդեն տեղյակ են իմ այս

կարգադրության

Յեզ կը նդունեն ձեզ ու Զեսիկային
Այսպես, ինչպես ինձ և Բասանիոլին։
Այսպես ուրեմն, մասցեք բարով, դե, ցտեսություն։

Լորենցո

Թող բարի ժամեր և աղնիվ խոհեր ձեզ ընկեր լինեն

Զեսիկա

Բարի կատարում ձեր աղնվության բոլոր իղձերին։

Պորցիա

Շնորհակալ եմ ձեր այլքան բարի մաղթանքի համար

Յեզ նույնը սրտանց ձեզ եմ ցանկանում։ Մնացեք
բարով։

Զեսիկա յեզ լորենցոն դուրս եմ զնում

Այժմ, Բալթազար, ինչպես յես քեզ միշտ գտել եմ
պարկեշտ
Յեզ հավատարիմ, այսուհետև ել միշտ ալդպես յեղիր։
Առ այս նամակը. գործ դիր մարդկային ամեն ջանք
ու ճիգ

Վոր շատ շուտ համեմ Պակովա և այդ նամակը
հանձնես։

Քո ձեռքով, անձամբ դոքոր Բելլարիո իմ
ազգականին։

Ուշադիր լսիր, ինչ նամակ, հագուստ՝ վոր նա հանձնի
քեզ,

Դու այնքան արագ, վոր կարելի յերեակալիեւ,
Բեր այն կայանը, վորտեղից լասոն և մեկնում
վենետիկ։

Դե, ժամավաճառ մի լինի խոսքով, այլ մեկնիր
իսկույն։

Յես քեզնից առաջ այնտեղ կլինեմ, լաստակալանում։

Բալթազար

Տիկին, մեկնում եմ հենց հիմա, փութով։

Պորցիա

Գնանք, Ներխսա, մի բան եմ սարքել, վոր դու չգիտես.
Մենք ավելի շուտ կհանդիպեք մեր ամուսիններին,
Քան թե նրանք են այդ պատկերացնում։

Ներիսաւ

Յեղ նրանք ել մեզ:

Պարցիս

Այս, Ներիսաւ, միայն այնպիսի նոր հագուստներով,
վոր պիտի կարծն, թե մենք ել ունենք, այն ինչ վոր
չունենք:

Յես ամեն բանով գրագ եմ դալիս,
վոր յերբ հագնվենք տղամարդու պես,
Յես դառնալու լմ քեզնից գեղեցիկ.
Քաջ մարդու նման, քեզնից ափելի լավ սուր կկապեմ.
Այսպես կխոսեմ, յեղեգի ձայնով, ինչպես դեռահաս
Պատանիները, վոր նոր են անցնում տղամարդության.
Կանացի քայլերս այնպիս կփռիսմ,
Վոր յերկու քայլս դառնան առնական մի մեծ
քայլափոխ.

Միշտ մեծ մեծ փրթող պատանու նման,
Պետք ե շարունակ խոսեմ վեճերից և կոիվերից.
Պիտի հորինեմ գեղեցիկ սուտեր,
Թե ինչպես այնքան պատվավոր կանայք գժվել են
վրաս,
Բայց իմ մերժումից հիվանդացել են և ցավից մեռել.
Յես բնչ անելի, հետո կզղամ,
Կասեմ՝ չպետք ե յես նրանց մահվան պատճառ
դառնալի:

Բազմաթիվ փոքրիկ սուտեր կպատմեմ
Մարդկանց, այնպես վոր նրանք ել յերդվեն՝
Թե մի տարի կա, վոր յես ուսումս կիսավարտ թողիւ
Մտքիս մեջ հազար տեսակ խաղեր կան
Յեղ չարություններ, վոր պիտի անեմ:

Յեկ, յերբ նստենք կառք, վոր սպասում ե այդու
դուան մոտ,

Յես քեզ կպատմեմ իմ ծրագիրը:
Շտապիր, գնանք. պետք ե հենց ալսոր
Գեթ քսան մղոն ճանապարհ կտրենք:

Գնում են

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Բելմոնտ. մի պարտեզ

Դալիս են Լանուը և Զեսիկան

Լանորլոս

Այս, ալդպես ե, վորովհետեւ, տեսեք, հայրերի
մեղքն ընկնում ե նրանց զավակների վրա. դա յե
պատճառը, հավատացեք, վոր յես վախենում եմ ձեզ
համար: Յես ձեզ հետ միշտ պարզ եմ խոսել. հիմա յել
իմ կարծիքն եմ հայտնում այդ հարցի մասին. ուրեմն,
ուրախ յեղեք, վորովհետեւ, անկեղծ ասած, կարծում եմ
վոր դուք գժուխք եք գնուլու: Մի հույս միայն կա,
վոր կարող ե ձեզ մի քիչ ոդնել. այն ել մի տեսակ
անհարազատ հույս ե:

Ջեսիկա

Ի՞նչ հույս ե դա, ասա խնդրեմ:

Լանորլոս

Այն ե, վոր պետք ե մի քիչ հույս ունենաք, վոր
ձեր հայրը ձեր հալոր չե, այսինք դուք ջնուդի աղջիկը
չեք:

Զիսիկա

Դա իսկապես անհարազատ հռւյս կլիներ.
Այդ գեղքում ել մորս մեղքերը կը բլեյին վրաս:

Լանսրոս

Այդ ել ձիշտ եւ ուրեմն վախենում եմ, վոր դուք
թե ձեր հոր և թե ձեր մոր կողմից եք դժոխք պնալու:
Այսպես, յերբ փախչում եմ Սիլահից, ալսինքն ձեր
հորից, ընկնում եմ Քարիբդի մեջ, ալսինքն ձեր մոր
վերկը. Երկու կողմից ել կորած եք:

Զիսիկա

Վոր ալգուես ե՞ւ ամուսնուս շնորհիվ կիրկվեմ. նա
ինձ քրիստոնյա լե դարձրել:

Լանսրոս

Ճիշտ ասած, շատ լատ բան եւ արել մենք, քրիս-
տոնյաներս արդեն բավական շատ ելինք, հաղիվ ելինք
կարողանում քովքովի հաշտ ապրել. քրիստոնյանեցի
շատանալը կրաքարացնի խողի զինը. Յեթե ամենքս
խողի միս ուտենք, շատ չի քաշի, աշխարհքի փողն եւ
վոր տանք՝ մի կտոր խողի ճաշպ չենք կարող ճարել,
վոր կրակի վրա խորովենք:

Գալիս ե լորենցոն

Զիսիկա

Լանսրոնտ, հիմա ասածներէ ամուսնուս կպատմեմ
ահա գալիս եւ:

Լորենցո

Ի՞նչ ես կնոջս քաշ տալիս անկյունները, Լանսր-
լոտ, դու շուտով ինձ խանդոս կդարձնես:

Զիսիկա

Զե, Լորենցո, վախենալու կարիք չունես. յես ու
Լանսրոնտ խռովիլ ենք իրարից: Առանց ալլեալու-
թան նա ինձ ասում ե՞ւ թե յերկնքում ինձ փրկու-
թյուն չկա, քանի վոր հրեալի աղջիկ եմ: Ասում ե՞ւ թե
դու յել հասարակության լավ անդամ չես, վորովհետեւ
հրեաներին քրիստոնյա դարձնելով՝ թանգացնում ես
խոզի միաը:

Լորենցո

Ցես զբա համար հասարակությանը ավելի լավ
պատասխան կտորմ, քան թե դու, վոր լցրել ես այն
նեզրուհու փորը. Լանսրոնտ, Մավրուհին հղի լե քեզնից:

Լանսրոս

Կիքը փորը լավ եւ դատարկ փորից:

Լորենցո

Ինչպես ամեն մի հիմար կարող երառախաղ անել:
Կարծեմ շատ չի քաշի և խելքությունը չխոսելու մեջ
կկալանա, և խոսելը թութակների համար միան գո-
վելի կլինի: Ներս զնա, տղա, և ասա, վոր պատրաստ-
վեն ընթրիքի:

Լանսրոս

Արդեն պատրաստ են, քանի վոր ամենքն ել ստա-
մոքս ունեն:

Լորենցին

ՏԵՐ իմ աստված, Ի՞նչ ես ընկել սրախոսության
լեռներց. ուրեմն ասա, վոր ընթրիքը պատրաստեն:

Լաճորլոս

Ալդ ել պատրաստ ե, պարոն. պետք ե ասել, վոր
սեղանը շտկեն:

Լորենցին

Լավ, ասա՝ սեղանը շտկեն:

Լաճորլոս

Չե, պարոն, ալդ ել չեղավ. ծուռ հո չի, վոր շտկեն:

Լորենցին

Ելի մի բան գտավ ասելու. Ի՞նչ ե, ուզում ես խել-
քիդ ամբողջ տոպրակը մեկ անգամից դատարկել
Խնդրեմ, մի պարզ մարդու խոսքը պարզ մտքով հաս-
կանաս. — գնա ընկերներիդ մոտ, ասա՝ սեղանը կարգի
դնեն, կերակուրը բերեն, մենք ել գալիս ենք ընթ-
բելու:

Լաճորլոս

Ինչ սեղանին ե վերաբերում, պարոն, սեղանը
կարգի կողմին. ինչ կերակրին ե վերաբերում, կերակուրը
կերպի, ինչ ձեր գալուն ե վերաբերում, պարոն, ալդ
ել կախված ե ձեր կամքից և տրամադրությունից:

Գնում ե

Լորենցին

ԽԵՂՃ վողջամտություն. Ի՞նչպես բառերը իրար ե
խառնում.

Այս խեղկատակը բառախաղերի մի ամբողջ բանակ
Տեղավորել ե հիշողության մեջ:

Յես շատ հիմարներ գիտեմ, ավելի ազդեցիկ դիրքով,
Վորոնք սրա պես պաշար են դիզել

Ենք վորեն փուչ սրախոսության համար զոհում են
խոսքի իմաստը:

— Վժնց ես, Զեսիկա, լեկ, թանկագինս, ասա
կարծիքդ.

Ի՞նչպես ես գտնում մեր Բասանիոյի կնոջը, հոգիս:

Զեսիկա

Ամեն բանից վեր: Հիմա պետք ե, վոր

Սինիոր Բասանիոն որինակելի մի կյանք ունենա.

Պատաճ վիճելով այսպիսի մի բախտ հանձինս իր կնոջ
Ունի յերկնալին բարեբախտություն այս յերկը վրա,

Յիթե այդ բախտը չգնահատենա յերկը վրա,

Ուրեմն կարժեն վոր նա յերկնքի յերես չտեսնի:

Յիթե յերկնքում յերկու աստվածներ մի գրազ գային
Յեվ գրակականն յերկու յերկրային կանալք լինելին,

Յեվ Պորցիան լիներ յերկուսից մեկը,

Յերկրորդի վրա պետք ե բարդեյին անպայման մի
բան,

Քան զի այս կոպիտ, խղճուկ աշխարհը

Մի այլ մրցակից չունի Պորցիային:

Լորենցին

Եւս ել քեզ համար ալնպիսի ընտիր մի ամուսին եմ,
ինչ նա մի կին:

Զեսիկա

ՀՇը, ինձնից հարցրու:

Լորենցո

Հետո կհարցնեմ. նախ գնանք ընթրենք:

Զեսիկա

Վնչ, թող քեզ գովեմ, քանի դեռ գովքի ախորժակ
ունեմ:

Լորենցո

Վոչ, վոչ, ինսպրում եմ. թող դա սեղանի զըռւյցը լինի,
ինչ եթ վոր ասես, կարող եմ մարսել կերակուրի հետ:

Զեսիկա

Էմպ. և կտեսնես թե ի՞նչ գովեստներ կասեմ քո
մասին:

Գնում եմ

ԱՐՑԻՎԱԾ ԶՈՐՅՈՒԴԻ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Վենետիկ. դատարանի որակը

Մանում են Դուքսը, մագնիֆիկոները, Անտոնիոն,
Բասանիոն, Գրացիանոն, Սալերինոն և ուրիշներ

Դումբա

ԵԱԿԵ. Անտոնիոն այսաբդ ե արդյոք:

Ա.ՅԱՆՈՒԻՆ

Պատրաստ ե, տեր իմ, ձեզ ծառայելու:

Դումբա

Շատ եմ ցավում քեզ. հակառակորդդ քարե սիրտ ունի.
Նա մարդատյաց մի թշվառական ե,
Վոր անընունակ ե գութ զգալու.
Յեզ իսպառ զուրկ ե նա վողորմելու ամեն կաթիլից:

Ա.ՅԱՆՈՒԻՆ

Ինչպես լսել եմ, Ձեր բարձրությունը շատ ճիգ ե թափել
Նրա անողոք դատապահանջը մեղմելու համար,
Բայց քանի վոր նա անդրդիվելի յե,
Յեզ որինական մի միջոց չկա
Ինձ նրա վոխից փրկելու համար՝
Միայն մնում ե, վոր համբերությամբ յես զինվեմ նրա
Կատաղության դեմ. և անդորր հոգով պատրաստ
Եմ կըել
Նրա չար հոգու դաժանությունն և ժանտությունը:

Գույս

Թող մի մարդ գնա և այդ հրեային դատարան կանչե:

Սալերինո

Նա դռան առաջ պատրաստ կանգնած եւ դալիս եւ,
Տեր իմ:

Մտնում եւ Շայլոկը

Գույս

Տեղ տվեք դրան, թող դա և կանգնի ալստեղ, մեր
դիմաց:
Շալլոկ, ամենքը կարծում են, յիս եւ այդպես եմ
կարծում,

Վոր դու վճռել ես քու ամբողջ վոխը հասցնել մինչև
վերջին աստիճան, հետո կարծում են,

Վոր դու կդժառ՝ նույնքան անսովոր,
Վորքան առերես այս անգիտությունդ արտառվոր եւ

Մինչ դու հիմա պահանջդ ես ուզում՝
Ալսինքն այս մարդու մարմիից մի ֆունտ միս,

Հետո վոչ միայն դու այդ կներես,
Այլ և դրդվերդ մարդասիրական զգացումներից՝

Մայր գումարից ել կեսը կզիջես,
Գթալից աշքով կնայես բոլոր այն վորձանքներին,

Վոր թափվել են՝ այս խեղճ մարդու գլխին
Յեվ ալդ արքունի վաճառականին գետին են զարկել:

Նրա վիճակը գութ եւ դուրս քաշում
Պղնձե կրծքից և քարե սրտից,

Անխիղա թուրքերից և թաթարներից,
Վորոնք անվարժ են ամեն սիրալիր մարդավարության,

Բոլորս քեզնից ակընկարում ենք մի լավ պատասխան:

Շայլոկ

Հայտնել եմ արդեն Զերդ բարձրությանը թե ինչ
միտք ունեմ.

Մեր սուրբ Շաբաթով յերդում եմ արել՝
Առնել մուլհակիս արդար պահանջը՝ այն եւ մի
ֆունտ միս:

Յեթե այդ մերժեք, թող ի չիք դառնան
Զեր որենքները և ձեր քաղաքի ազատությունը.
Դուք հարցնում եք ինձ թե ինչո՞ւ համար
գերադասում եմ
Մի ֆունտ լեշի միս, քան յերեք հազար դուկատ
ստանալ:

Զեմ ուզում դրան իսս պատասխանել.
Յենթադրենք, սիրտս այդպես եւ ուզում, —
պատասխան չե՞ այդ:

Ասենք թե մի մուկ տունս քանզում եւ.
Յեվ յիս ուզում եմ տաս հազար դուկատ ծախսել,
վոր նրան
թույն տան, սպանեն, Այս պատասխանն ել ձեզ
չի գոհացնում:

Մարդիկ կան, վորոնք չեն սիրում տեսնել հորանջող
մի խոզ,

Ուրիշներ կան, վոր կատու տեսնելիս՝ խելագարվում են.
Յեվ կամ ոնդախոս պարկապղուկի ձայնը լսելիս՝

Զեն կարող իրենց մեզը քիչ պահել.
Կրքի տիրուհին՝ զգալությունը, վարում ե կիրքը

Նալած թե ինչն ե իրեն դուրեկան և ինչն անախորժ,
Լավ, հիմա յել գանք ձեր պատասխանին,

Քանի վոր վոչ մի դրական պատճառ չի կարող լինել
Նրան՝ թե ինչու մի մարդ զգվում ե հորանջող խոզից,

Յերկրորդն՝ անվասս, ոգտակար կատվից,
Մի ուրիշն, ուռած պարկապղուկից,—նա բռնադատոված
Պետք ե տեղի տա անխռուսափելի խայտառակության
Յեկ ֆնասվելով՝ ինքն ել ֆնասի,
Նույնպես ել յս ձեզ չեմ կարող ասել, չեմ ուղում ասել
Թե ինչու համար ինձ ֆնասակար Անտոնիոսի դիմ
Դատ եմ բաց արել, լոկ այսքան ասեմ,
Վոր այդ մարդու դեմ մի հին վոխ ունիմ, մի տեսակ
Գարշանք:

Բառանիս

Ով անզգա մարդ, տիդ պատար նան չե,
Վոր արդարացնե անդութ վարժունք:

Շայլոկ

Յես պարտավոր չեմ իմ պատասխանով քեզ
Հաճոյանալ:

Բառանիս

Միթե ամեն մարդ՝ ինչ վոր չե սիրում, այն
սպանում ե:

Շայլոկ

Ել ինչ ատել ե, յեթե մարդ չուզե սպանել ատելին:

Բառանիս

Անպատճառ ամեն մի վիրավորանք ատելություն չե,

Շայլոկ

Ի՞նչ ե, կուղելիք, վոր յերկրորդ անդամ ոճը
Խալթեր քեզ:

Ա. Առնելիս

Բայց հիշիր, խնդրեմ, վոր դու վիճում ես այս
հրեալի հետ.

Դու ավելի շուտ կարող ես գնալ կանգնել ծովափին
Յեկ հրամալել կառաղած ծովին,

Վոր նա իջեցնի իր ուռած կուրծքը.

Դու ավելի շուտ կարող ես գնալ գայլին հասկացնել
Թե ինչու դառը մայում ե այնպես իր մոր յետելից.

Կամ թե կարող ես պատվիրել բարձր յեղենիներին,
Վոր անձակն կանգեն, չշարժեն իրենց կատարներն

անգամ,

Յերբ յերկնքի մեծ փոթորիկները ցնցում են նրանց,
Դու ավելի շուտ կարող ես, ասենք, ամենադժվար
գործը կատարել,

Բան թե կակղեցնել այս մարդու սիրուը,

Վորից կարծը ու կոշտ ինչ կա աշխարհում:

Խնդրում եմ, ուրեմն, այլևս վոչ մի առաջարկ չանել
Յեկ նոր միջոցներ չգործադրել

Այլ պատշաճ կարգով և արագությամբ տվեք,
Խնդրում եմ,

Ինձ՝ իմ պատիժը, և այս հրեալին՝ իր սրտի իղձը:

Բառանիս

Քո յերեք հազար դուկատի գիմաց՝ ահա վեց հազար:

Շայլոկ

Յեթե վեց հազար այդ դուկատաներից ամեն մի դուկատ
Վեց կտոր դառնար, և ամեն կտոր դառնար մի դուկատ,

Յես չելի առնի, դարձյալ մուրհակս կպահանջելի:

Թուրա

Դու բնէ դատաստան կարող ես հուսալ, յերբ վոր
գութ չունես:

Շալլոկ

Ի՞նչ դատաստանից պետք ե վախենամ՝ յերբ
հանցանք չունեմ:
Դուք ել, շատերդ, ունեք դրամով գնած գերիներ.
Քանի վոր նրանց գնել եք, ուստի ծառայեցնում եք
Ստրուկի անարդ գործեր անելու,
Զեր ջորիների և ձեր եշերի ու շների պես:
Կարսղ եմ ասել — բաց թողեք նրանց,
Կամ ձեր սերնդի հետ ամուսնացրեք,
Ի՞նչու բեռի տակ քըտինք են թափում,
Նրանք ել ձեղ պես թող քնին փափուկ
անկողիններում,
Նրանց քիմքերն ել ձեր խորտիկների համը թող զգան.
Բայց դուք ինձ կասեք. — «այդ ստրուկները մեղ
են պատկանում»:
Յես ել նույն կերպ եմ պատասխանում ձեղ.
Այդ մի ֆունտ միսը, վոր պահանջում եմ, շատ
թանգ եմ գնել,
Ինձ ե պատկանում և պետք ե առնեմ:
Յեթե մերժեք ինձ՝ թուք ձեր որենքին,
Յեվ այդ դեպքում ձեր հրովարտակներն վոչ մի
բան չարժեն:
Դատ եմ պահանջում. պատասխանեցեք՝ դատում եք
թե վոչ:

Թուրա

Իմ իշխանությամբ յես կարող եմ այս դատը
կայացնել՝

Յեթե չհասնի այսոր Բելլարիոն, մի գիտուն դոկտոր,
Վորին այս դատը վճռելու համար կանչել եմ տվել.

Սակերին

Վողորմած տեր իմ,
Մի նամակաբեր դուրսն սպասում ե,
Նա Պադովալից նոր ե տեղ հասել
Ցեվ ալդ դոկտորից բերել ե նամակ:

Թուրա

Նամակը բեր մեզ. կանչիր բերողին:

Բասանիո

Սիրտդ պինդ պահիր, Անտոնիո. յերբեք դու մի
վախենա,
Այս հրեան պետք ե միսս, արյունս, վոսկորներս առնե,
Նախքան կթողնեմ մի կաթիլ արյուն թափես ինձ
համար:

Անօնիո

Վաչ, վոչ, յես հոտի քոսոտ վոչխարն եմ,
Ամենից հարմար մորթվելու համար.
Պտողների մեջ ամենաթուլն ե շուտ ընկնում ծառից,
Ինձ թողեք բախտիս. Իսկ դու, Բասանիո,
Ինձ ել ավելի լավ ծառայություն չես կարող անել,
Բան ինձնից հետո ապրել և գրել տապանագիրս:

Մտնում ե Ներիսա Ա՝ փաստաբանի գրագրի հագուստով

Թուրա

Պադովալից եք գալիս, Բելլարիոն ե ձեղ ուղարկել:

Ներիսաւ

Ալո, ազնիվ տեր, նա բարեռում եւ ձերք բարձրությանը:

Տալիս ե մի նամակ

Բառանիո

Հրեա, ինչու լիս ալդպես լեռանէով դանակդ սրում:

Շայլոկ

Այդ անանկ մարդուց իմ առնելիքը կտրելու համար:

Գրացիանո

Թարսիստ հրեա, լավ ե դանակդ սրես

Քո հոգու վրա, քան թե ներանիդ. բայց չկա մետաղ,
Յեվ մինչև անդամ դահճի կացինը,

Վոր քո սուր վոխի կեսի չափով ել սալրասուր լինի:
Վոչ մի աղաչանք չի՞ կարող հօտնել քո քարե սրտին:

Շայլոկ

Վոչ մեկը, վոր քո լոկապատակից դուքս լեկած լինի:

Գրացիանո

Ո՛հ, դժոխք գնաս դու, անողոք շուն,

Դոլությունդ անդամ թող արդարության մեղքը
համարվի.

Քիչ ե մնացել հավատքս ել խախտես,

Պյութագորի պես ինձ ել կարծել տաս,

Թե գաղանների հոգին մտնում եւ մարդկանց
մարմնի մեջ:

Քո ալդ չար վոգին անշուշտ մի դալիի հոգին ե լիդել,

Յեվ յերբ աչդ գալիին, իբրև մարդկակեր, մի որ
կախել են,

Նրա ժանտ հոգին՝ հենց կախաղանից թռած ժամանակ,
Յերբ դու քո պիղծ մոր արգանդումն ելիր, մտել ե

քո մեջ:

Ու դրա համար քո ցանկություններն արնածարավ են,
Դալալին, անկուշու:

Շայլոկ

Ալդքան գոռալով թոքեր է հս մաշում.

Բայց չեմ կարող դու տված մուրհակի կնիքը ջնջել.

Խեղճ յերիտասարդ, ինչըդ հավաքիր,

Թե չե կցրվի և բժշկելու հնար չի լինի:

Գումա

Դոկտոր Բելլարիոն իր այս նամակով հանձնարարում ե
Մեր դատարանին մի յերիտասարդ,

Գիտուն դոկտորի: Ա՞ւր ե:

Ներիսաւ

Այստեղ ե.

Դուրսն սպասում ե ձեր պատասխանին,

Կրարեհաճք ընդունել նրան:

Գումա

Թող յերեք-չորս մարդ գնան ե նրան պատվով
ներս բերեն.

Իսկ դատարանը, մինչև վոր նա գա,

Թող Բելլարիոի նամակը լսե:

Քարտուղար (կարդում ե)

«Թող հայտնի լինի Զերդ բարձրության, վոր ձեր
նամակն ստացա հիմա, յերբ շատ հիվանդ եմ: Բայց

Ճիշտ այն ըռպելին, լերը ձեր նամակաբերն լեկավ, ինձ
մոտ եր մի լերիտասարդ գոկտոր, վոր Հոռվմից ինձ
բարեկամական այցելութիւն եր լեկել: Անունը Բալ-
թազար է: Յես նրան տեղեկութիւնն ավել այն դատի
մասին, վոր ծագել ե հրեալի և վաճառական Անտոնիուի
միջն. և մենք շատ գրքեր թղթատեցինք: Յես իմ կար-
ծիքը հալտնել եմ նրան, վոր ձեր հաղորդե, նրա վրա
ավելացնելով իր հմտությունը, վոր բարձր և ամեն
գովեստից: Յես խնդրեցի նրան, վոր ձերդ բարձրու-
թիւն ցանկութիւնը կատարելու համար, նա ինքն ինձ
փոխարինե: Աղաչում եմ ձեզ, նրա տարիքի փոքրու-
թյունը թող չնվազեցնի ձեր հարդարից գնահատու-
թյունը. վորովհետեւ լես լերբեք չեմ տեսել այսքան լե-
րիտասարդ մի հասակ՝ այսքան հասուն գլուխով:
Հանձնարում եմ նրան ձեր բարեհաճ ընդունելու-
թիւնը, վստահ եմ, վոր նրա արժանիքը ավելի ևս
հալտնի կդառնա ձեզ, լերը այն կփորձեք»:

Դուքս

Հիմա լսեցիք թե ինչ ե գրել դիտուն Բելլարիոն.
Ենք ահա, կարծեմ, դոկտորն ել լեկավ:

Մտմում և Պորդիան՝ փաստաբանի հաջուսով

Ձեր ձեռքն ինձ տվեք: Դոկտոր Բելլարիոն ե ձեզ
ուղարկել:

Պորցիա

Այս, աղնիվ Տեր:

Դուքս

Բարով եք յեկել: Նստեցեք խնդրեմ:

Մանոթ եք արդյոք այս դատարանի քննած դատի
հետո:

Պորցիա

Այս լիովին տեղեկացել եմ:

Վեր մեկն ե այստեղ վաճառականը, և վերն ե հրետն:

Դուքս

Անտոնիո, և դու, ծերունի Շայլոկ, կանգնեցեք առաջ:

Պորցիա

Անունդ Շայլոկ ե:

Շայլոկ

Շայլոկ ե, այո:

Պորցիա

Շատ տարորինակ հանգամանք ունի հարուցած դատդ.
Սակայն այնպիսի կարգով ես վարում հարուցած գործդ,
Վոր վենետիկյան որենքը արգելք չի կարող լինել
Դատավարությանդ:

Անտոնիոյին

Դժւք եք այս դատին լենթարկվողն, այս:

Անտոնիո

Ալդատես ե ասում:

Պորցիա

Ճանաչմամբ եք ձեր մուրհակը:

Անտոնիո

Վենետիկի վաճառականը—Ե

Պորցիա

Ուրեմն հրեան պետք ե գութ ցուց տա:

Տայլոկ

Ինչից ստիպված լես պետք ե դժամ, ալդ ինձ ասացեք:

Պորցիա

Գութն իր բնուկթով հարկադիր բան չե.

Ալ նա լերկնքից կաթում ե ներքե

Քաղցը անձրեի պիս. և կրկնապատիկ որհնություն ե նա.

Որհնություն ե նա թե ստացողին և թե տվողին.

Հզորագույնն ե հղորների մեջ.

Գութը գահակալ արքայի համար

Թագից ավելի վայելուչ զարդ ե:

Նրա գայիսոնն արտահայտիչն ե լերկրային ուժի,

Խորհրդանշիշն ե վեհափառության, ահավորության.

Նա մարմնացնում ե թագավորական ահ ու սարսափը.

Բայց գութը բարձր ե գայիսոնական իշխանությունից.

Թագավորների սրտերի մեջն ե գթության գահը.

Գութը աստուծո մեծ հատկանիշն ե.

Յեվ աշխարհային հզորությունը այն ժամանակն ե

Ավելի նման Յերկնային Ուլժին,

Յերբ գթությունը միշտ գործակցում ե արդարության
հետ:

Հրեա, թեպետ և դու պահանջում ես արդար

դատաստան,

Բայց լավ իմացիր, վոր յեթե արդար դատաստան լինի,

Զպիտի փրկվի մեղնից վոչ մեկը:

Մենք միշտ աստծուց գութ ենք աղերսում,

Յեվ մեր աղոթքը պետք ե բոլորիս գութ սովորեցնի:
Իմ ասածները նրա համար են,
Վոր մեղմացնեն քո այս խիստ պահանջի

արդարությունը.

Բայց լեթե պնդես, Վենետիկի խիստ այս դատարանը
Ստիպված պետք ե վճիռ արձակե

Յեվ դատապարտե քո հակառակորդ վաճառականին:

Տայլոկ

Հանցանքիս համար թող լես պատժվեմ մեծ

դատաստանին,

Բայց պահանջում եմ յես հիմա որենք,
Մուրհակիս տուգանքն, արդար պահանջը:

Պորցիա

- Արդյոք չի կարող վաճառականը պարտքը վճարել:

Բառակիս

Կարող ե. ահա յես նրա կողմից ատյանի առաջ

Առաջարկում եմ պարտքի գումարի կրկնապատիկը.

Յեթե դա քիչ ե, հանձն եմ առնում տալ

տասնապատիկը,

Գրադ եմ դնում յես իմ ձեռքերը, գուլխս ու սիրտս.

Բայց լեթե ալդ ել գոհացուչիչ չե, ուրեմն պարզ ե,

Վոր պարկեցառությունն ե վոտնահարվում չարության
կողմից:

Խնդրեմ այս անդամ որենքը ձկեք ձեր իշխանությամբ,

Մեծ արդարություն գործելու համար՝

Թույլ տվեք մի քիչ անարդարություն.

Այս դաժան դեի կամքը կոտրեցեք:

Պորցիա

Անկարելի լեւ և Վենետիկում չկա մի մարմին,
Վոր կարողանա դրված որենքը իր կամքով փոխեւ.
Նման վարմունքը կարող եւ դառնալ նախընթաց
մի քայլ

Յեվ շատ զեղծումներ դրա հետեւից
Կարող են խուժել մեր պետութիւն մեջ: Դա կարելի չեւ:

Շայլոկ

Մի Դանիել եւ դատարան լեկած, մի նոր Դանիել:
Ո՞վ լերիտասարդ գիտուն դատավոր, ինչպես հարգես
քեզ:

Պորցիա

Խնդրում եմ թույլ տաս տեսնեմ մուրհակը:

Շայլոկ

Ահա, նալեցեք, հարգելի դոկտոր, ահա, նալեցեք:

Պորցիա

Շայլոկ, քո պարտքի լեռապատիկն են քեզ
վերադարձնում:

Շայլոկ

Յերդում եմ արել յերկնքի առաջ. յես լերդմնազանց
Զեմ ուզում լինել և հոգուս վրա ալդ մեղքը բարդել
Վահ, յեթե ամբողջ Վենետիկն ել տան, յես ալդ չեմ
անի:

Պորցիա

Ճիշտ ե, մուրհակի պայմանաժամը անցել ե արդեն.

Հրեան որենքով իրավունք ունի մի ֆունտ միս կտրել
Վաճառականի կբծքի վրայից:

Վողորմած յեղիր, առ քա գումարի լեռապատիկը
Յեվ հրամայիր, վոր թուղթը պատռեմ:

Շայլոկ

Կամաձալնվեմ, յերբ իմ պահանջը կատարված լինի:
Հայտնի լեւ, վոր դուք շատ արժանավոր մի դատավոր
եք.

Որենքը գիտեք և շատ ճշմարիտ մեկնաբանեցիք.
Հանուն որենքի, վորի պատվական այուներից եք դուք,
Զեղ կոչ եմ անում վճիռն արձակեր:
Յերդվում եմ հոգվովս, մարդկային լեզուն
Անզոր, անուժ ե միտքս փոխելու.
Մնում եմ կանդնած յես իմ մուրհակի պահանջի վրա:

Անօնիո

Յես թախանձում եմ, վոր դատարանը իր վճիռը տա:

Պորցիա

Լավ, յերբ ալգակս ե, ահա վճիռը.

Դուք պատաստեցեք ձեր կուրծքն այս մարդու
գանակի համար:

Շայլոկ

Ազնիվ գատավոր, մի սքանչելի գու յերիտասարդ:

Պորցիա

Որենքի իմաստն ու նպատակը պարտամուրհակում
Գրված տուգանքին արդ չեն հակասում:

Շայլոկ

Շատ ճշմարիտ ե, ով դու իմաստուն, արդար
դատավոր.
Դուք շատ ավելի հասած եք և մեծ, քան լեռնում եք:

Պարցիա

Ուրեմն պետք ե ձեր կուրծքը բանաք.

Շայլոկ

Այո, իր կուրծքը,
Պարտամուրհակը ալդպես ե ասում.
Ալդպես ե չՅ, ով ազնիվ դատավոր,
«Սրտին մոտ տեղից» — ահա բառ առ բառ:

Պարցիա

Այո, այդպես ե. կշեռք կմ ալստեղ՝ միսը կշռելու

Շայլոկ

Այս, բերել եմ:

Պարցիա

Շայլոկ, քո ծախքով
Դու մի վիրաբույժ ալստեղ ունեցիր, վոր վերքը
կապե,
Թե չե կարող ե մարդը արնաքամ լինել և մեռնել:

Շայլոկ

Հիշատակված ե դա իմ մուրհակում:

Պարցիա

Հիշատակված չե, բայց քեզ ի՞նչ մըսա:
Լավ ե ալդքանը մարդասիրաբար քո կամքով անես:

Շայլոկ

Պարտավորված չեմ, մուրհակում չկա:

Պարցիա

Դեհ, վաճառական, ասելիք ունիք:

Անօննիո

Քիչ բան. յես զինված և պատրաստված եմ:
Տուր ինձ քո ձեռքը, ազնիվ հասանիո, դե, մնաս
բարով,
Յերբեք մի տիրիը, վոր քո պատճառով այս որին
հասա:
Մեր այս դեպքի մեջ բախտը ավելի բարեսիրտ լեղավ,
Քան առ հասարակ նա բարեսիրտ ե. նա միշտ սովոր ե
Ստիպել անբախտ, հարստությունը կորցրած մարդուն
Շատ լերկար ապրել, կնճռոտ ճակատով և փոս

աչքերով,

Զքավորության տարիներ տեսնել, Բախտս բարի լե,
Այդ թշվառության դանդաղ տանջանքից ազատում ե
ինձ:

Հարգանքս հայտնիր ազնիվ կնոջը,
Յեկ Անտոնիովի մահվան դեպքերը պատմիր մի առ մի,
Ասա թե վորքան սիրում ելի քեզ. մեռնելս գովիր.

Յեկ լերբ բոլորը պատմես, վերջացնես՝ հարցրու նրան
ի՞նչպես ե սիրված յեղել Բասանիոն:

Մի զջա լերբեք քո բարեկամին կորցնելուդ համար,
Նա լել չի զդում, վոր այս ձևով ե պարտքով վճարում,
Յեկ լեթե հրեան մի քիչ խոր կտրե,

Այդ պարտքն իմ սրտով կլինեմ տված:

Պորցիա

Ահա, Շալլոկ, այս վաճառականից մի ֆունտ՝ միս
քոնն ե.
Ատլանը վճռում և որենքը ալդ քեզ ե հատկացնում:

Շալլոկ

Արդմր դատավոր:

Պորցիա

Ալդ նրա կրծքից կարող ես կտրել,
Որենքն արտօնում և դատարանը ալղպես ե վճռում:

Շալլոկ

Գիտուն դատավոր: Ահա քեզ վճիռ: Հայդե,
պատրաստվիր:

Պորցիա

Մի քիչ սպասիր. մի բան ել դեռ կա:
Պարտամուրհակը մի կաթիլ արյուն չի հատկացնում
քեզ:

Ահա գրված ե միայն «մի ֆունտ միս»:

Առ քո մուրհակը, առ քո ֆունտ միսը.

Սակայն, կտրելիս, քրիստոնյալի մի կաթիլ արյուն
Ցեթե թափեցիր, ապա քո գուլքը և կալվածները

Գետք և գրավվեն հոգուտ պետության,
Հենց Վենետիկի որենքի ուժավ:

Պորցիան

Արդմր դատավոր: Լավ լամբ, հրեա: Գիտուն
դատավոր:

Բառաթիա

Խոիր Անտոնիո, ամուսնացել եմ իս մի կառջ հետ,
Վոր շատ ավելի թանգ ե ինձ համար, քան նույնիսկ
կյանքը.

Բայց կյանքս, կինս, ամբողջ աշխարհը
Չունին իմ աչքին այսքան մեծ արժեք, վորքան քո
կյանքը.

Յեղ իս պատրաստ եմ կորցնել ամեն բան,
Ամեն ինչ զոհել այս սատանալին, վոր քեզ աղատեմ:

Պորցիա

Կարծեմ լեթե ձեր կինս ալստեղ լիներ, ձեղ լսեր
հիմա,
Նա շնորհակալ չեր լէնի ձեղնից:

Գրացիան

Ցես մի կին ունեմ. լերդվում եմ, նրան անչմափ
սիրում եմ.
Ցերանի թե նա յերկնքում լիներ, և կարողանար
Խնդրել յերկնալին մեծ զորությունից
Փոխելու այս շուն հրեայի միտքը:

Շալլոկ (առաջին)

Ահա քրիստոնյա ամուսինները: Մի աղջիկ ունեմ...
Ավելի լավ ե, վոր Բարաբասի սերնդից մի ժարդ
Նրան կին առնե, քան մի քրիստոնյա:

(Պորցիային)

Իզուր ենք ալստեղ ժամանակ վատնում.
Խնդրում եմ իսկույն վճիռն արձակեք:

Շայլոկ

Որենքը... միդ եւ

Պորցիա

Կարող ես տեսնել որինագիրը:
Քանի վոր ինքդ արդարություն ես պահանջում, շատ
լավ,
Ապահով լեղիր, վոր արդարություն կստանաս լրիվ,
Նույնիսկ ավելին, քան փափագում ես:

Գրացիանո

Գիտուն դատավոր: Լավ լսիր, հրեա: Գիտուն
դատավոր:

Շայլոկ

Յեթե ալդպես ե, — յես լնդունում եմ ձեր առաջարկը,
Վճարեցեք ինձ պարտքս գումարի լիուապատիկը,
Յեվ քրիստոնյան թող գնա իր գործին:

Բասանիո

Ահա գումարը:

Պորցիա

Վհչ, կացեք, հրեան պետք եւ ստանա արդար
հատուցում.
Կացեք, մի շտապեք. վոչինչ չի ստանա, բացի
սուզանքից:

Գրացիանո

Զհուդ, ահա քեզ արդար դատավոր, գիտուն դատավոր:

Պորցիա

Պատրաստ, ուրեմն, միսը կտրելու: Արյուն չխափես.
Վոչ ել մի ֆունտից մի քիչ ավելի կամ պակաս
կտրես:

Յեթե ավելի կամ պակաս կտրես,
Թեկուզ ցորենի հենց մի հատիկի քսաներորդի
Մասնիկի չափով ծանր կամ թեթև լինի մի ֆունտից,
Վհչ, յեթե նույնիսկ մի մազի չափով նժարը թեքվի,
Դու պետք եւ մեռնես և ամբողջ գուշքդ պետք ե

գրավվի:

Գրացիանո

Մի Դանիել ե, յերկրորդ Դանիել.
Անհավատ ջուլդ, հիմա ճանկս ընկար:

Պորցիա

Ինչ՞ու. յե հիմա հրեան սպասում: Ա՛ռ քո տուգանքը:

Շայլոկ

Վճարեցեք ինձ իմ մայր գումարը, և թողեք գնամ:

Բասանիո

Պատրաստ ե, ահա:

Պորցիա

Վհչ. նա քիչ առաջ հրապարակով գումարը մերժեց.
Նա արդարություն պետք եւ ստանա, և իր մուքհակը:

Գրացիանո

Դանիել, ասի, յերկրորդ Դանիել:
Ենորհակալ եմ, հրեա, վոր ալս բառն ինձ սովորեցրիր:

Շայլոկ

Իմ մայր գումարն ել չեք ուզում ինտ տալ,

Պորցիա

Վոչինչ չեն տա քեզ, բացի տուգանքից,
Վոր դու, ով հրեա, կարող ես առնել քեզ վտանգելով:

Շայլոկ

ԴԵՆ, թող սատանան նրան բարի տա:
Ել ինչու կանգնեմ խոսակցեմ իզուր:

Պորցիա

Սպասիր, հրեա, որենքը քեզնից դեռ պահանջ ունի:
Մեր վենետիկան որենքների մեջ հիշատակված ե,
Վոր լեթե յերբեք ոտար մի մարդու վրա հաստատվի,
Վոր նա ուղղակի, կամ անուղղակի փորձեր ե արել
Մի քաղաքացու կյանքին սպառնալ,
Նրա վողջ գուցքի կեսը արվում ե այն մարդուն, ահաս,
Վորի կյանքի դեմ նա դավ եր լարել,
Յեզ մյուս կեսը պետք ե զբավկի հոգուտ պետության,
Իսկ հանցավորի կյանքը կախված ե
Միայն դուքսի վողորմությունից:
Յեզ քո պարագան, ասում եմ, նույնն ե,
Բանդի պարզվեց հըրապարակով դատավարությամբ,
Վոր անուղղակի, նույնիսկ ուղղակի
Դու դավ ես նյութել այս ամբաստանլալ մարդու
կյանքի դեմ,
Յեզ ալդ հանցանքով ընկել ես ահա այն վտանգի մեջ,
Վոր մի քիչ առաջ հիշատակեցի:
Ուրեմն չօքիր, և հայցիր դուքսի վողորմությունը:

Գրացիանո

Խնդրի՛ր, վոր թույլ տան ինքդ քեզ կախեա.
Սակայն պարանի փող ել չունես դու,
Թանզի գրավված ե ամբողջ գույքդ հոգուտ պետության.
Ուրեմն պետք ե պետության հաշվին կախաղան
հանվես:

Դումա

Վորողեսդի տեսնես մեր և քո հոգնւ
տարրերությունը, —
Եսս հիմա կյանքդ քեզ եմ շնորհում, նախ քան
ինդրելդ.

Թո գուլքի կեսը Անտոնիոյին ե,
Կեսն ել հասնում ե մեր պետությանը,
Բայց լեթե զղջաս, դա կփոխարկվի միայն տուգանքի:

Պորցիա

Ալո, բայց միայն պետության մասը, վոչ Անտոնիոյի:

Շայլոկ

Ալդ բոլորի հետ, դեն, կյանքս ել առեք, մի
շնորհեք ինձ.
Յերբ տունս պահող նեցուկն առնում եք, իմ տունն
եք առնում.
Յերբ իմ ապրուստի միջոցներն եք դուք ինձանից
առնում,
Առնում եք կյանքս:

Պորցիա

Դուք ինչ կարող եք շնորհել նրան:

Գրացիան

Միալն մի պարան և ուրիշ վոչինչ, ի սեր Աստուծու:

Անոնքին

Յեթե մեր դուքսը և դատարանը շնորհեն նրան
իր հարստության կեսի տուղանքը, յես գոհ կլինեմ.
Սակայն մյուս կեսը պետք ե ինձ հանձնի, վոր
իր մահից հետո յես այդ զերադաշնեմ հենց այն
սինիորին,

Վոր փախցրել ե նրա աղջկան,
Դեռ կան թեական յերկու պակման ել. նախ՝ ալս
շնորհի
Փոխարեն, հրեան պետք ե մկրտի. քրիստոնյա դառնա.
Յերկրորդ, նա ալստեղ, ալս դատարանում
Պետք ե անհապաղ ստորագրե մի ընծալագիր,
Վորով, իր մահից հետո, իր ամբողջ կարողությունը
Պետք ե կտակով թողնի աղջկան և իր փեսային

Դուքս

Պետք ե ալդ անե, թե չե քիչ, առաջ
Տված ներումս վերացնելու իմ:

Պարցիա

Հոժմը ես, հրեա, համ, ինչ ես ասում:

Շայլոկ

Այս, հոժմը եմ:

Պարցիա

Գրագիր, իսկաւին, այստեղ պատրաստիր մի ընծալագիր:

Շայլոկ

Խնդրում եմ թուլլ տաք գնամ այստեղից,
ինձ լավ չեմ զգում. ընծալագիրը ուղարկեցեք տուն,
կ'ստորագրեմ:

Դուքս

Գնա, բայց պետք ե կատարես այն, ինչ ալստեղ
ասացինք:

Գրացիան

Մկրտությանդ յերկու կնքահայր պետք ե ունենաս.
Սակայն յեթե յես լինելի այսոր քո դատավորը,
Յերկուսի վրա կ'ավելացնելի նորից տաս հոգի,
Վոր քեզ տանելին դեպի կախաղան
Եղվ վոչ թե դեպի կնքման ավազան:

Շայլոկ զ զնում ե դուքս

Դուքս

Սինիոր, խնդրում եմ, վոր շնորհ անեք ինձ մոտ ճաշելու:

Պարցիա

Շատ խոնարհաբար ներումն եմ խնդրում Ձեր
բարձրությունից.

Պետք ե այս գիշեր Պադովա գնամ,
Եղվ հարմարն այն ե, վոր իսկույն մեկնեմ:

Դուքս

Յես շատ եմ ցավում, վոր ժամանակը ձեռնտու չե ձեզ:
Անտոնիո, պետք ե դու լավ հատուցես ազնիվ պարոնին.
Իսկապես նրան շատ ես պարտական:

Դուքսը իր եետելորդմերավ դուքս ե զնում

Թասանիո

Հարգելի պարոն, այսոր, շնորհիվ ձեր իմաստության,
Բարեկամս ու յես անպարտ դուրս յեկանք այս
դատարանից.

Այն յերեք հազար դուկատը, վոր մենք
Պարտական ելինք տալ այն հրեալին,
Ամենայն սիրով նվիրում ենք ձեզ,
Վորպես մի նշան մեծ յերախտիքին:

Ս.Յօննիո

Բացի դրանից, ընդմիշտ, հավիտլան
Ձեզ պարտ ենք մնում՝ ազատ և անկախ
բարեկամություն:

Յեվ ծառալություն:

Պարցիա

Ով սրտով գոհ ե, վարձատրված ե.
Ձեզ ազատելով յես ել շատ գոհ եմ.
Ուրեմն ալդպիսով համարում եմ ինձ լավ
վարձատրված:
Իմ հոգին յերբեք սրանից ավելի վարձկան չի յեղել:
Խնդրում եմ, յերբ մենք նորից հանդիպենք՝
ճանաչեցեք ինձ,
Մնացեք բարով, և թույլ տվեք ինձ հրաժեշտ խնդրել:

Թասանիո

Սիրելի պարոն, ստիպում ենք ձեզ:
Մեղնից վերցրեք գեթ մի հիշատակ, վորպես
մեծարանք
Յեվ վոչ թե վճար, յերկու բան ունեմ ձեզնից խնդրելու.
Նախ այդ չմերժել, յերկրորդ մեզ ներել:

Պարցիա

Շատ եք ստիպում, պետք ե, ուրեմն, մի բան ընդունեմ.

(Անտոնիոյին)

Պարգևեցեք ինձ ձեր ձեռնոցները,
Վոր յես կկրեմ իբրև հիշատակ:

(Թասանիոյին)

Յեվ այդ մատանին կընդունեմ ձեզնից իբրև հիշատակ:
Բայց յետ մի քաշեք ձեր ձեռքը ալգպես. այլ բան
չեմ ուզում.
Իսկ այդ մատանին բարեկամաբար չպետք ե մերժեք:

Թասանիո

Վհչ, այս մատանին շատ չնշին բան ե, սիրելի պարոն,
Յեվ ինձ ամոթ ե այդ ձեզ նվիրել:

Պարցիա

Բացի դրանից, վոչ մի ուրիշ բան չեմ վերցնելու.
Լոկ դրան սրտանց յես հավանեցին:

Թասանիո

Բայց սա ինձ համար ավելի արժե, քան իր արժեքը.
Հրապարակով վորոնել կտամ
Յեվ վենետիկի մատանիներից ամենաթանգը
Պետք ե յես գտնեմ և ձեզ նվիրեմ:
Մեծ ուրախությամբ, միան խնդրում եմ
Այս մեկի համար ինձ ներող լինեք:

Պորցիա

Տեսնում եմ, վոր դուք խոստանալու մեջ
առատաձեռն եք.

Սիսինը, նախ մուրալ ինձ սովորեցրիք,
իսկ հիմա ել դուք սովորեցնում եք,
թե ինչպես պետք ե պատասխաններ տալ
մուրացկաններին:

Թասանիո

Բայց այս մատանին, սիրելի սինիոր, կինս ե տվել ինձ,
թեվ նվիրելիս լերդվեցրել ե ինձ,
Վոր չվաճառեմ, վոր չնվիրեմ և չկորցնեմ:

Պորցիա

Շատ մարդկանց համար դա ծառալում ե վորպես
պատրվակ,

Յերբ չեն ցանկանում մի բան նվիրել:
Եեթե ձեր կինը մի խելագար չե,
Յեվ լերբ իմանա, վոր արժանի լեմ լեղել լես դրան,
Զի կարող ընդմիշտ քեն պահել ձեր դեմ, այդ
բանի համար:

Շատ լավ, տեր ընդ ձեզ:

Պորցիան յել Ներիսան դուրս են զնում

Ա. Յանենիո

Սինիոր Բասանիո, տար պուր մատանին:
Նրա մատուցած ծառալությունը, նաև իմ սերը
Թող հակակլուն, գերազանցեն քո կնոջ պատվերին:

Թասանիո

Գնա, Գրացիանո, շուտ հասիր նրան,

Մատանին հանձնիր, լեթե կարող ես, նրան հետդ բեր
Անտոնիոյի մոտ, Շտապիր, հասիր:

Գրացիանոն զնում ե

Ցել, գնանք մեզ մոտ, և առավոտյան կանուխ
վեր կենանք
Եեվ թոչենք դեպի Բելմոնտ միասին: Գնանք,
Անտոնիո:

Դուրս են զնում

ՏԵՍԱՐԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ

ՎԵՆԵՏԻԿ. մի փողոց

Գալիս են Պորցիան և Ներիսան

Պորցիա

Հարց ու փորձ արա և տես թե ուր ե հրեայի տունը,
Ընծայագիրը տուր ստորագրել:
Պետք ե այս գիշեր ճանապարհ ընկնենք,
Մի որ առաջ մեր ամուսիններից պետք ե հասնենք տուն:

Գալիս ե Գրացիանոն

Գրացիանո

Հարգելի սինիոր, լավ՝ վոր հասա ձեղ,
Սինիոր Բասանիոն՝ լավ մտածելով՝
Խնդրեց հանձնել ձեզ իր այս մատանին,
Եեվ հրավիրել ձեզ իր մոտ ճաշի:

Պորցիա

Անկարելի լե:

Բալց այդ մատանին յես ընդունում եմ
շնորհակալութեամբ.

Խնդրում եմ, ալդես ասացեք նրան.
Խսկ ալժմ, խնդրեմ, այս ծեր Շալոկի տունը ցույց տվեք
Մեր այս պատանուն:

Գործիանո

Շատ լավ, ցույց կտամ:

Ներիստ

Պարոն, ուզում եմ ձեզ մի խոսք առել:
Առանձին, Պորցիային

Տեսնեմ, կարմղ եմ նրանից առնել ամուսնուս ողը,
Խնչվոր հավիտան պահելու խոստում, յերդում եմ արել:

Պորցիա (առանձին)

Անշուշտ կարող ես. յերաշխավոր եմ:
Յերբ նրանց տեսնենք, ահ, ինչ յերդումներ պետք
ե անհն՝ թե

Մատանիները տղամարդկանց են նվիրաբերել,
Խսկ մենք կնայենք նրանց յերեսին՝ աչք աչքի հառած՝
Յեզ ավելի թունդ յերդումներ կանհնք՝ թե ճշմարիտ չեն.
(Քարձը)
Գնամ, շտապիր. գիտես թե հուր եմ քեզ սպասելու:

Ներիստ

Սիրելի պարոն, յեկեք, ցույց տվեք հրեայի տունը:

Ցնում եմ

ԱՐԱՐՎԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՐԱԶԻՆ

Թելմոնա. մի ժառանդի Պորցիայի տան առաջ
գալիս են Լոքենցոն և Զեսի կոտն

Լորենցօ

Խնչպես լուսինը շողում ե պայծառ, այսպես մի գիշեր,
Յերբ անուշ հովը մեղմ, համբուրում եր նիրհող
ծառերին

Յեզ նրանք բնավ ձալն չելին հանում, այսպես
մի գրշեր

Տրոլիլոսն յելավ հին Տրոլայի պարսպի վրա
Յեզ հառաչելով տիրությամբ նայեց
Դեպի հունական տաղավարները,
Ուր գտնվում եր Կրեսիդն այն գիշեր:

Ձեսիկա

Այսպես մի գիշեր՝
Ցողի վրայով, վոտքի ծալրերին, քալլում եր թիսրեն,
Յերբ հանկարծ տեսավ առյօւծի ստվերն՝ առյօւծից
առաջ,

Յեզ սարսափահար թողեց ու փախավ:

Լորենցօ

Ալսպես մի գիշեր՝
Գոռ ծովի ափին կանգնած եր Դիդոն, ուռենու
մի ճլուզ

Զեռքում ճոճելով՝ նա սիրականին նշան եր անում,
Կոր վերադառնա դեպի Կարթագեն:

Զեսիկա

Այսպես մի գիշեր՝
Մեղեան պետք ե քաղելիս լիներ դութական խոտը,
Կոր ջահելացրեց ծերուկ եղունին:

Լորենցո

Այսպես մի գիշեր՝
Սիրուն Զեսիկան թողեց շատ հարուստ հրեայի տունը
Յեզ Վենետիկից իր ալն անպիտան սիրեկանի հետ,
Խուզ տվեց Բելմոնտ:

Զեսիկա

Այսպես մի գիշեր՝
Զահել լորենցոն յերդվեց, վոր սաստիկ սիրում ե նրան,
Սիրտը գողացավ հավատարմության շատ
խոստումներով,
Վորոնցից վոչ մեկն, ավաղ, անկեղծ չեր:

Լորենցո

Այսպես մի գիշեր՝
Սիրուն Զեսիկան՝ լինելով փոքրիկ մի չարաճի՝
Ի զուր բամբասեց իր սիրեկանին,
Ու սիրեկանը ալդ ներեց նրան:

Զեսիկա

Եթե մարդ չգար՝ այս ամբողջ գիշեր
Ես չելի մնա քո խոսքերի տակ. բայց, սուս, ականջ դիր,
Կարծես եմ մարդու վոտնաձան:

Գալիս և Ստեփանոս

Լորենցո

Ո՞վ ե գիշերվա ալս լուռիչան մեջ վազ տալիս ալդպես:

Սահե

Բարեկամ:

Լորենցո

Բարեկամ. ի՞նչ բարեկամ ե.
Խնդրեմ անունդ ասա, բարեկամ:

Սահեան

Սինիոր, իմ անունն Ստեֆանո յե. լես լուր եմ բերել,
Վոր իմ տիրուհին կհասնի Բելմոնտ արև չ'ծագած:
Նա թափառում ե այս շրջակալքում, սուրբ խաչերի մոտ,
Յեզ ծունկ ե չոքում և աղոթում ե,
Վոր աստված իրեն յերջանկություն տա
ամուսնության մեջ:

Լորենցո

Ո՞վ կա նրա հետ:

Սահեան

Մի սուրբ ճգնավոր և իր նաժիշտը,
Բայց խնդրեմ ասեք, վերադարձել ե արդյոք իմ տերը:

Լորենցո

Վոչ, դեռ չի լեկել. և գալու մասին լուր չենք
ստացել:
— Բայց յեկ, Զեսիկա, հիմա ներս գնանք

Յեվ այս գղլակի տիրուհու համար
Մի հանդիսավոր ընդունելության պատրաստենք շտապ:

գալիս և կամուըլութե
Լանսըլոս

Սոլմ, սոլմ, չել, սոլմ, սոլմ:

Լորենցո

Ռով եւ:

Լանսըլոս

Սոլմ, սիրելի լորենցուին չելք տեսել: Սինիոր
Լորենցո, սոլմ,

Սոլմ:

Լորենցո

Թող քո ալդ սոլման, ով մարդ աստուծո, ահա,
ալստեղ եմ:

Լանսըլոս

Սոլմ: Վաթտեղ ես:

Լորենցո

Այստեղ:

Լանսըլոս

Ասա նրան, վոր տիրոջս կողմից մի սուբհան-
դակ եւ յեկել՝ շեփորը լցրած ուրախ լուրերով. լույսը
դեռ չբացված՝ տերս ալստեղ կլինի:

Լորենցո

Հոգիս, ներս գնանք, սպասենք նրանց.
Բայց վհչ, ի՞նչ վսաս. ինչմւ ներս գնան :

Յեվ, Ստեֆանո, խնդրեմ իմաց տուր տնեցիներին,
Վեր ձեր տիրուհին շուտով գալու լե.

Հետո լել ձեր տան լերաժիշտներին կանչիր
ոռւրս, ալստեղ:

Ստեֆանոն զնում ե

Ի՞նչպես լուսինը մեղմ նիրհում ե այս ածուի վրա.
Ցեկ նստենք այստեղ և թող նվագի քաղցր հանուներ
Մեղմությամբ լցվեն մեր ականջները.

Դիշերը և մեղմ խաղաղությունը
Ներդաշնակում են լերաժշտության թրթռութներին:
Նստիր, Զեսիկա: Նելիր, տես ինչպես լերկնակամար
Նախշված ե խիտ շողշողուն վոսկե սկավառակներով.
Երերկնալին բոլոր ալդ մարմիններից վոչ մեկը չկա,
վոր չգեղգեղե, հրեշտակե պիս, իր շարժումի մեջ՝
Հավետ ձալնակցած անուշ աչքերով քերովքեներին,
Կա մի նույնպիսի ներդաշնակություն:

Մեր անմահական հողիների մեջ՝
Սական մենք նրան չենք կարող լսիւ, քանի վոր հողե
Այս քայքալելի հանդերձը հոգուն շատ բիրտ փակում ե,
գալիս են յերածիշ ները

Հել, յերեք ալստեղ, և Դիանային զարթեցրեք լերգով.

Անուշ ձայներով հագեցրեք տիկնող լաղությունը.

Նրան տուն տարեք դլութած նվագով:

յերաժշտություն

Զեսիկա

Ցիս միշտ տիրում եմ, յերբ ունկընդրում եմ
լերաժշտություն:

Լորենցու

Պատճառը այն է, վոր ուշք ու միտքդ հափշտակվում է,
Դիտիր մի վայրի խայտացող նախիր,
Կամ սանձ չտեսած ջահել ձիերի մի գիծ յերամակ.
Նրանք վայրենի վոստուններ գործում, սաստիկ
փանչում

Եեվ խրինջում են. դա նրանց արյան վառ բորբոքից ե.
Բայց թող պատահմամբ փողի ձայն լսեն
Կամ նվագ հասնի նրանց ականջին,
Ապա կտեսնես՝ բոլորը մեկից կանգ կառնեն իսկուն,
Յերաժշտության քաղցր ուժով նրանց վայրի աչքերը
Կստանան մի հեզ ու համեսո նայվածք:
Դրա համար ե, վոր բանաստեղծը հեքիաթ ե հյուսեւ
Թե Որիեսը դրութում եր ծառեր, քարեր ու գետեր.
Զկա մի եակ այնքան փայտացած, բիրտ ու կատաղի,
Վոր գեթ մի վայրկյան չբնափոխվի յերաժշտությամբ:
Ով հոգում չունի քերաժշտություն,
Նա ընդունակ ե ամեն մի դավի և խարդավանքի.
Գիշերվա նման մոռալ են նրա սրտի հույզերը,
Նրա կրքերը խավարտչին են երերոսի պես:
Պետք չե հավատալ այդպիսի մարդու:
Եեկ, ականջ դնենք յերաժշտության:

Գալիս եմ Պոքիա մ յեվ Ներիսան

Պարցիա

Նայիր, այն լույսը, վոր յերեռում ե, իմ դահլիճումն ե,
Տես, վորքան հեռվից այն փոքրիկ մոռը լուս ե
արձակում,
Ալդպես ե փալում և բարի գործը ալս չար աշխարհում:

Ներիսա

Քանի լուսին կար՝ լույս չեր յերեռում:

Պարցիա

Այսպես մեծ փառքը նսեմացնում ե իրենից փոքրին.
Փոխարքան նույնքան շքեղ ե փալում, վորքան մի
արքա,

Սակայն յերբ արքան հանդես ե գալիս՝

Մյուսի փառքն ու փայլն իսկույն կորչում ե,
Ինչպիս հանդերի համեստ առվակը հորդ ջրերի մեջ:
Նվագ. ականջ դիր:

Ներիսա

Տիկին, սա ձեր տան նվագախումբն ե,

Պարցիա

Առանց հարակցման, ինչպես տեսնում եմ, վոչ մի բան
լավ չե:

Նվագը հիմա ավելի քաղցր ե, քան թե ցերեկով:

Ներիսա

Խոր լոռւթյունն ե, վոր այդ նվագին հմայք ե տալիս:

Պոք

Ագռավը ել նույնքան անուշ ե յերգում վորքան
արտուտը

Եեթե վոչ մեկին ունկընդըող չկա.

Եեվ, իմ կարծիքով, յեթե սոխակն ել ցերեկով յերգեր,
Եերբ կըսթկսթում են բոլոր սագերը,

Դուցե սարբակից չգերադասվեր իր անուշ ձակնով:

Վերքան բաներ կան, վոր հարմար պահին հարգի լեն
դառնում
Յեվ հասնում լրիչ կատարելության և գովասանքի:
Բայց սուս. Լուսինը ալժմ քնած ե Ենդիմիոնի՝ հետ,
Յեվ չեր ցանկանա վոր զարթեցնելինք:

Յերաժշուուրյանը դադարաւմ և

Լուսեցո

Պորցիալի ձախն ե, թե չեմ սխալվում:

Պորցիա

Նա ինձ ճանաչեց իմ տգեղ ձայնից, ինչպիս կկուլին
կույրն ե ճանաչում:

Լուսեցո

Սիրելի տիկին, ձեզ բարի գալուստ:

Պորցիա

Աղոթում ելինք մենք մեր սիրելի ամուսինների
Վողջության համար, վոր վերադառնան:
Վերադառնել են,

Լուսեցո

Դեռ վոչ, Տիրուհի.

Բայց մի սուրահանդակ առաջուց էեկել և լուր ե բերել,
Վոր շուտով կդան.

Պորցիա

Քնա, Ներիսա,

Յեվ ծտռաներիս, ասա, վոր նըանք յերբեք Շուլց չտան

Թե մենք այստեղից բացակայել ենք:
Դու լել, Լուսեցո, և դռւ, Զեսիկա, վոչ մի խոսք
չասեք:

Խփարի ձայն

Լուսեցո

Տեր ամսւսինն ե. ահա, ալդ նրա շեփորի ձայնն ե:
Մենք շատախոս չենք. դուք մի վախենաք:

Պորցիա

Կարծես ալս գիշերն հիվանդ ցերեկ ե,
Մի գունատ ցերեկ, յերբ արեգակը
Պարզ չի յերեւմ ամպերի տակից:

Դալիս են Բասանիոն, Անտոնիոն, Գրացիանոն իրենց
հետեւ դներով

Բառանիս

Յերբ արև չկա, յեթե յերեվաս՝
Մենք ել հակոտնյա յերկների հետ ցերեկ կունենանք:

Պորցիա

Այս, կուզեյի լուսատու լինել, բայց վոչ յերկնալին,
Ավդպիսի կինը խիստ ծանր բեռ ե ամուսնու համար,
Յեվ Բասանիոին թող բեռ չլինեմ, ալդ Աստված
չանե.

Բարի գալուստ քեզ ալս ատնը, Տեր իմ:

Բառանիս

Ծնորհակալ եմ, Տիրին, վողջունիր իմ բարեկամին,
Սա յե ալն մարդը, ազնիվ Անտոնիոն,
Վորին յես ալնքան յերախտապարտ եմ:

Պորցիս

Յեվ պետք ե նրան ամեն բանով միշտ պարտական
մնաս,
Քանզի քեզ համար, ինչպես լսում եմ, մեծ պարտք
ստանձնեց:

Ս. Յօննիո

Վոչ ավելի մեծ քան այն իմ պարաքը, վոր հատուցեցի:

Պորցիս

Տեր իմ, մեր տանը ձեզ բարի գալուստ.
Մենք պետք ե ձեզ այդ ուրիշ կերպ ցույց տանք,
Վոչ թե բառերով.
Ուրեմն ընդհատեմ այս բերանացի մեծարանքները:

Գրացիանա (Ներփային)

Ահա այն լուսնով յերդվում եմ, վոր ինձ
Ճուր ես մեղադրում: Հավատացնում եմ, վոր դատավորի
գրագրին տվի:
Ներիքինի դառնա նա, վոր ստացավ. դա ի՞նչ ե,
հոգիս,
Վոր ալդքան մոտ ես ընդունում սրտիդ:

Պորցիս

Կովեցիք արդեն. ի՞նչի վրա լի:

Գրացիանա

Իր ինձ նվիրած մի վոսկի ողի, չնչին մատանու,
Վորի մակագիրն ամբողջ աշխարհին այնքան
հարմար ե.

Դանակ շինողի բանաստեղծություն, դանակի վրա,
ինչպես, որինակ՝ «սիրիր ու պահիր»:

Ներփաս

Ի՞նչ ես զուր խոսում արժեքի մասին և
մակագրության:

Յերբ այդ մատանին նվիրեցի քեզ,
Դու յերդում արիր, վոր մինչև մահդ չես հանի մատից.
Յեվ նա կմնա հավիտան քեզ հետ գերեզմանիդ մեծ:
Յեթե վոչ սիրուս, գոնե այն ահեղ քո յերդումների
Համար դու նրան պետք ե հարգելիր և լճվ պահելի
Մի դատավորի գրագրի տվիք.
Վոչ, գիտե՛ աստված, այն գրագիրը, վորին տվել ես,
Կղակին յերբեք մազ չի ունենա:

Գրացիանա

Անշուշտ կունենա, յերբ հասակ առնի, տղամարդ
դառնա:

Ներփաս

Հմ, յեթե կինը տարիք առնելով դառնա տղամարդ:

Գրացիանա

Այս ձեռքս վկա, մատանին տվի յես մի պատանու,
Քո հասակից կարճ, մի կարճահասակ, քոսոտ տղալի,
Մի պարզ, լեզվանի գրագիր տղա, վոր
վարձատրության

Փոխարեն ինդրեց տալ այդ մատանին:

Հոգիս ել կորչեր՝ յես չելի կարող մերժել պատանուն:

Պողիա

Յեթե ուզում եք, վոր անկեղծ խոսեմ, շտո վատ եք
արել,
Վոր թեթևորեն ձեր կնոջ տված առաջին ընծան
Զեռքից տվել եք. մի բան, վոր սիրով և յերդումներով
Ձեր մատն են դրել, հավատարմութլամբ ամրացրել
այնտեղ:
Յես ել ամուսնուս նվիրել եմ մի նման մատանի.
Նա ինձ լերդվել ե, վոր վոչ մի դեսլքում չի հանի
մատից:
Ահա ալստեղ ե, նրա փոխարեն կարող եմ լերդվել,
Վոր նա վոչ կտտ, վոչ ել մինչեւ իսկ մատից կիանի,
Թեկուզ աշխարհի բոլոր գանձերը պարզեն նրանու
Այո, Գրացիանո, ճշմարիտն ասած,
Դուք ձեր կնոջը առիթ եք տվել խրոտ վշտանալու,
Յես ել լինելի, կիսնթանալի:

Բառանի (առանձին)

Ինձ համար լտավ ե՝ ձախ ձեռքս կտրել
Յեվ հետո լերդվել՝ վոր լերը մատանին պաշտպանում
ելի,
Կռվի մեջ կորավ,

Գրացիան

Սինիոր Բասանիոն նույնպիս ստիպվեց իր մատանին
տալ
Այն դատավորին. նա այնքան խնդրեց, մինչև վոր
առավ.
Խսկապես դրան նա արժանի յեր,
Հետո պատանին, այն գրագիրը,

Վոր մեր թղթերը գրելու համար շատ եր չարչարվել,
Մատանիս ուզեց: Յեվ տեր և ծառա վոչ մի ուրիշ
բան

Չուզեցին առնել, բացի ալդ լերկու մատանիներից:
Պողիա

Ի՞նչ մատանի յես նվիրել, Տեր իմ,
Հույս ունամ, վոչ այն, վոր յես եմ ավել:

Բառանի

Յեթե յես մեղքիս վրա մի սուտ ել կարողանայի
Սուս ու վուս բարդել, պիտի հերքելի, բայց զու
տեսնում ես,
Վոր մատիս վրա մատանի չկա, գնաց...

Պողիա

Այդպես ել

Թո կեղծ սրտի մեջ հավատարմութլուն չկա, ուրեմն.
Յերդվում եմ, վոր յես քո անկողինը լերբեք չեմ մտնի,
Մինչև մատանիս չտեսնեմ կրկին:

Ներիսա

Վոչ ել յես քոնը,
Մինչև չտեսնեմ տված մատանիս:

Բառանի

Անուշիկ Պողիա,

Յեթե գիտնայիր, թե ինչ մարդու լեմ ավել
մատանին,

Յեթե գիտնալիր, թե ում համար եմ տվել մատանին,
Էմբռոնեյիր, թե ինչու համար եմ տվել մատանին,
Վենետիկի վանառականը - 6

Յեվ ինչ աստիճան դժկամությամբ եմ տվել
մատանին,
Յեթե չընդունեցին ուրիշ վոչ մի բան, բացի
մատանին, —
Անպատճառ մի մի քիչ դժողովությունդ կմեղմացնելիր:

Պարցիս

Յեթե գիտնալիք, թե ինչ զորություն ուներ
մատանին,
Յեթե հարգելիք նրան, վոր տվեց քեզ այդ
մատանին,
Յեթե պատիվդ հրամայում եր պահել մատանին, —
Զելիք ընծայի դու այն մատանին:
Յեթե դու նրան մի քիչ յեռանդով չուզենալիք
տալ,
Կա արդուք մի մարդ, անքան կամապաշտ,
Այն աստիճան զուրկ համեստությունից, վոր
պահանջե այն,
Ինչ վոր ամեն մարդ սովոր ե պահել իբրև
որբություն:
Թող ներիսայից լես ել սովորեմ, թե ինչ եմ կարծում.
Թող մահս տեսնեմ, չեթե մի կնոջ տված չլինես:

Բասանիս

Յերգվում եմ պատվիս և հոգուս վրա,
Կնոջ չեմ տվել, այլ որինագետ մի գիտնականի,
Վոր լերեք հազար դուկատ չընդունեց
Յեվ այն մատանին խնդրեց ինձանից, նախ մերժեցի
տալ
Յեվ խիստ սրտնեղած թողեց, հոռացավ
Նա, վոր սիրելի իմ բարեկամի կլանքն եր ազատել:

Լավ, ինչ անելի, անուշիկ տիկին.
Ստիպված եյի մատանիս զրկել նրա լետեից.
Սաստիկ ամոթը և ակնածանքը պատել եյին ինձ.
Պատվազգացումս չեր կարող թույլ տալ

Վոր իմ պատիվը արատավորեր, ներիր ինձ, տիկին,
Գիւերվա այս սուրբ ջահերը վկա,
Յեթե դու ինքդ ներկա լինելիք,
Հենց դու մատանին կառնելիք ինձնից
Յեվ կընծայելիք ազնիվ դոկտորին:

Պարցիս

Թող այն դոկտորը մոտ չգա տանս,
Քանի վոր նա յե ստացել սիրած իմ այն մատանին:
Վոր յերգվել ելիք հավիտյան պահել,
Նրա նկատմամբ ուզում եմ լինել
Քո չափ, քեզ նման առատաձեռն,
Յեվ նրան վոչինչ չպիտի մերժեմ,
Վոչ իմ մարմինը, վոչ ել ամուսնուս անկողինն անզամէ
Նրան կարող եմ իսկույն ճանաչել, այդ հաստատ գիտեմ
Ել վոչ մի զիշեր մի մնա դուրսը.
Արգոսի նման իմ վրա հսկիր,
Պատվովս եմ յերգվում, ինչ վոր իմն ե դեռ,
Յեթե չհսկես, և մենակ մնամ,
Յես այն դոկտորին պիտի ընդունեմ իմ անկողինը:

Ներխս

Յես ել զրագրին. ուրեմն զգույշ կաց,
Յեվ ինձ մի հանձնիր իմ պահպանության,

Գրացիան

Ինչ կուզես՝ արա. բայց գրադիրը թող ձեռքս չընկնի,
թե չե կկոտրեմ նրա գրիչը!

Անօնիս

Ավաղ, յիս եմ այս կոխմիրի անբախտ պատճառը:

Պարցիա

Դուք մի վշտանաք, դուք ալսուհանդերձ մեր բարի
հյուքն եք:

Բասանիս

Պորցիա, ներիր իմ ակամա մեղքը.
Ահա, այս բոլոր բարեկամների ներկայությամբ յես
Յերդվում եմ քո այդ սիրուն աչքերով,
Ուր ինձ եմ տեսնում...

Պարցիա

~~Սրան լսեցեք,~~
Յերկու աչքիս մեջ տեսնում ե իրեն վորակես
Եներկու մարդուն յիրդվիր, լերդվիր լերկդիմի այդ անձիդ վրա,
Շատ վստահելի մի յիրդում ե արդ:

Բասանիս

Բայց լսիր դու ինձ.
Հանցանքս ներիր, և հոգուս վրա կարող եմ լերդվիր,
Վոր ալսուհետու քեզ աված վոչ մի լերդում չեմ դրժի՞ո

Անօնիս

Դիտեք, մի անդամ յիս իմ մարմինը գրավ եմ դրեւ

Վոր ձեր ամուսնու լերջանկութիւնը ծառայած լինեմ.
Յեվ նո կորչեր, առանց այն մարդու,
Վորին նվիրեց ձեր թանգ մատանին.
Այս անդամ կրկին յերաշխավոր եմ և հոգիս գրավ,
Վոր ձեր ամուսինն լերբեք ուխտադրուժ չի լինի կամքով:

Պարցիա

Դուք յեղեք, ուրեմն, յերաշխավորը: Տվեք այս նրան
Յեվ պատվիրեցեք, վոր մուս մատանուց սրան
լավ պահե:

Մալիս և մատանին

Բասանիս

Համհ, սա հենց այն ե, վոր լես դոկտորին նվեր
եմ տվել:

Պարցիա

Յես ել նրանից եմ այդ ստացել: Ներիր, Բասանիո:
Դոկտորը հենց այդ մատանին տալով, պառկել ե
ինձ հետ:

Ներիսա

Դու յել ինձ ներիր, քաղցրիկ Գրացիանո.
Այն քոսոտ տղան, այն գրագիրը, սրա փոխարեն,
Հենց լերեկ գիշեր պառկել ե ինձ հետ:

Գրացիան

Համհ, սա նման ե խճուղիների նորոգութիւնը
Ամառ ժամանակ, յերբ ճամբաները ըստ ինքուան լավ են,
Դեռ չարժանացած ձեզ, յեղջուրներ եք տնկել
մեր գլխին:

Պարցիս

Կոպիտ մի խոսեք, բոլորդ ապշել եք:
 Ահա մի նամակ. կարդացեք հետո, ազատ ժամանակու
 Պաղովալից ե, Բելլարիովից ե,
 Դուք այդ նամակից կտեղեկանաք, վոր ալն դոկտորը
 Բնքը Պորցիան եր, և Ներիսան ել իր գրագիրը:
 Ահա, Լորենցոն կվկաչե, վոր ձեզանից հետո
 Յես ել մեկնեցի և հենց հիմա յեմ տուն վերադառնում,
 Յեվ մինչն անգամ գեռ ներս չեմ մտել:
 Սինիոր Անտոնիո, բարով եք լեկել.
 Այսպիսի մի լավ լուր եմ ձեզ բերել վոր չեք
 սպասում։
 Ահա ձեզ նամակ, իսկուն կարդացեք,
 Այդտեղ գրված ե, վոր ձեր նավերից լերեք նավ
 լցվածը
 Բեռնված ապրանքով, հանկարծ հասել են
 նավահանգիստը
 Զեք իմանում, թե ինչ տարորինակ զուգադիպությամբ
 Զեր այդ նամակը իմ ձեռքն ե ընկել:

Ս. Յօննի

Յես պապանձէել եմ։

Բաստեն

Դոկտորն, ուրեմն, դժւ ելիր, և յես չճանաչեցիւ

Պարցիան

Յեվ դժւ յես լեղել ալն գրագիրը,
 Վոր իմ գլուխը պիտի զարդարեր

Ներիսան

Այո, յես եյի.
 Բայց գրագիրը բնավ միտք չունի ալդ բանն անելու,
 Ցեթե տղամարդ չդառնա մի որ:

Բաստենիո

Թանգագին դոկտոր, դժւ պետք ե լինես անկողնակիցս,
 Ցեվ յերբ յես անից բացակա լինեմ, դու իմ կնոջ հետ
 Կարող ես պառկել:

Ս. Յօննի

Սիրելի տիկին,
 Դուք ինձ տալիս եք թէ կյանք, թէ ապրուստ.
 Այստեղ կարգում եմ, վոր իմ նավերը
 Նավահանգիստ են
 Հասել ապահով։

Պարցիս

Իսկ դժւք, Լորենցու։
 Իմ գրագիրը նաև ձեզ համար լավ լուր ե բերել։

Ներիսան

Այո, և առանց վարձի հայտնեմ.
 Ահավասիկ ձեզ և Զեսիկալին
 Հանձնում եմ հարուստ հրեայի զրած ընծալազիրը,
 Վորով, մահից վերջ, իր ամբողջ կալքը ձեզ ե կտակում։

Լորենցո

Սիրուն տիկիններ, դժւք մանանա յեք թափում
 յերկընքից
 Պովատանջ մարդկանց ճանապարհներին։

Պորցիա

Լույսը բացվում է,

Բայց նաստառ գիտեմ, վոր դեռ լիովին

Զի լուսարանված ալս անցուղարձը ձեր մտքերի մեջ,
Ցեկեք ներս գնանք, և դուք տանը մեզ հարց ու

փորձ արեք,

Մենք ձեր հարցերին կպատասխանենք ամբողջ
ճշությամբ:

Գրացիան

Թող ալդպես լինի. առաջին հարցը,

Վորի վրա յես իմ ներիսային պետք ե լերդվեցնեմ,

Այն ե, թե արդյոք գերադասում ե նա վոտքի մալ

Մինչև վաղ գիշերն, ու չի՞ ցանկանում անկողին
մտնել

Հենց հիմա, յերբ դեռ մինչև լուսաբաց լերկու
ժամ ել կա:

Բայց յեթե լուկսը բացված ել լիներ,

Պիտի ցանկալի, վոր այնքան մթներ,

Մինչև դոկտորի քաղաքուղարի հետ պառկած լինելի:

Բանի կյանք ունեմ վոչնչի վրա չեմ դողա ալնպես,

Ինչպես թանգարին իմ ներիսալի մատանու վրա:

Ա Յ Զ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ 1.

Յերկերեամի Յանոս. — Հոռմեական ասաված յերկերեամի. Նբա
մի յերեսը ծիծաղում, մյուսը լալիս երի
Նետոր. — Տըոլայի պատերազմն ժամանակող թագավորներից
մեկը, վորն ամսնից ծերն ու խելոքը լինելով համարված և լըլ-
մառւթյան տիպար:

Վոսկեգեղմ. — Լուս հունական գիցաբանության, Հերմեսը
Ֆրիքոնուն նվարել եր մի խոյ, վորի գեղմը — բուրդը վուկի յերի:
Ֆրիքոնն այդ խոյի մորթին նվիրեց իր աներոջ, Կողքիսի (Կոլիսի-
գա) թագավորին (Կողքիսը Սև ծովի արևելյան ափն ե, արևմայան
Վրաստանը): Յասոնի հրամանատարությամբ արդոնավորգները լո-
գում են գեսլի Կողքիս և թագավորի աղջկա, Մեղեայի ոգնությամբ
(Մեղեան սիրահարված եր Յասոնի վրա), կախարդանքով ձեռք են
բերում վոսկեգեղմը:

ՏԵՍԱՐԱՆ 2.

Սիրիլլա. — Դիցաբանական նշանակությունն են մարդարեռեկի
Շեքսպիրս ակնարկում ե Կումեյի Սիրիլլային, վոր հոռմայեցիների
մատ յերկարակցության տիպարն երի:

Դիանա. — Լուսնի և վորսորդության ասավածուհին, վորին
յերեւե սերը չի հաղթել, կուռառթյան տիպար:

ՏԵՍԱՐԱՆ 3.

Ոլիսլառ. — Վենետիկի սահարանն եր, վորի անունով մինչև
հիմա մի կամուրջ կա Վենետիկում:

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ 1.

Լիբան. — Հերկուլեսի ծառան, վոր Դեյանիրայի թունավոր դգեստը բերեց իր տիրոջ համար:

Ալկիտես. — Հերկուլեսի աղջանունը:

ՏԵՍԱՐԱՆ 5.

Հազարի ծնունդ. — Ըստ հրեական կրոնի, բոլոր քրիստոնյա և հեթանոս աղջերը սերված են Արքահամբ հարձրց, և ազարից՝ իսկ հրեաները՝ Արքահամբ օրինավոր կնոջից, Սառայից:

ՏԵՍԱՐԱՆ 7.

Հիրկանիտ. — Հին Պարսկաստանի խոշոր գալապներից մեկը:

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ 1.

Գուղիթու. — Թեմզի գետաբերանում մի ավտուատ, ուր շատ նազարեկութեք են աեղի ունեցել:

ՏԵՍԱՐԱՆ 2.

Լամոդենի, Տրոյայի թագավորը բարկացրեց Պասեյդոնին՝ ժովի աստծուն, վորը մի ծովային հրեց ուղարկեց նրա յերկիրն ավելելու Պատգամախոսը հայտնեց, վոր Պասեյդոնի բարկությունը հանգստացնելու համար Տրոյացիները ամսն տարի մի. մի կույս աղջիկ պետք ե զոհեն ժովային հրեցին Մի անդամ զոհվելու վիճակն ընկալ թագավորի աղջկան, հեղիոնիին: Հերկուլեսը խոսացավ սպանել հրեշին և ազատել թագավորի աղջկան, յեթ թագավորը նրան ընծայե այն ձիերը, վոր Տրոսն ստացել եր Զիվսից: Հերկուլեսը հրեշին սպանեց, բայց ձիերը չստացավ:

Միդաս. — Փոյսուիսայի հարուստ և թուլամորթ թագավորը նա այնքան գրամասեր եր, վոր Բաքոսից խնդրեց վոսկի զարձնելու այն ամենը, ինչին ինքը ձեռք կտա: Խնդիրը կատարվեց, Միդասնինի վոր կաշում եր, վոսկի յեր գանոււմ, նույնիսկ կերտակուրը:

ԱՐԱՐՎԱԾ ԶՈՐՅՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ 1.

Պադովա. — Մի քաղաք, վորի համալսարանը հանրածանոթ եր իր դիտնականներով, հատկապես որենազիմության և բժշկության գրտնականներով:

Պուրագորա. — Հույն փիլիսոփա, վոր ապրում եր մեր թշականությունը վեց գար առաջ Նրան և վերադրվում հոգեփոխության գաղափարը:

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ 1.

Տրոյիլոս յել Կրեսփոտայի պատմությունը հետեւյալն է: Տրոյայի պատերազմի ժամանակ, տրոյացի քուրմ կալքանը դավաճանում է իր հայրենակիցներին և ասցնում հույների բանակը, նրա աղջիկը՝ կրեսրտան, մուռմ և Տորյայում հալքասը համոզում է հույներին, վոր գերի վերցրած հերոս Անտենոյին հանձնեն յետ արոյացիներին, փոխանակելով կրեսփոտայի հետ կրեսփոտային բերում են Դիոսեղի մոտ: Կրեսրտան, վոր Տրոյայի Պրիամ թագավորի վորդու Տրոյիլոսի ուրուեհին եր, մոռանում է իր սիրածին, և հանձնվում Դիոսեղեն, դառնալով կանացի անհավատարմության տիպար:

Դիդոն. — Կարթագենի թագուհին, վորի արքունիքն և զալիս ենասար, Տրոյայի անկումից հետ Դիգոն սիրահարվում է ենասար գրա, յերբ վերջինու թողնում է նրան և հեռանում կեալի իտալիա, Դիգոնը լրեն այրում է խարույկի վրա:


Մետա. — Յասոնի կինը, վոր իր կախարդանքով լուսնի լուսով քաղաք խոտերից մի հյութ պատրաստեց և ներարկեց Յասոնի հոր՝ Եղոնի զին յերակի մեջ և յերիտասարգացրեց նրան:

Որիես. — Ըստ հունական դիցաբանության Որիեսը Կալիոպի Սուսայի վորդին եր, մեծ յերաժիշտ Նրա նվազը վոչ միայն գաղաներին եր թովում, այլ և յերգել եր ատլիս քարերին ու ծառըն:

Օրեբատ. — Ըստ դիցաբանության Ցերկը և Հակեսի (դժոխի) միջև մի տարածություն՝ ուր տիրապետում ել լիակատար խավարը:

Սնդիմին. — Հունական դիցաբանության մեջ մի արտաքո Կարդի գեղեցիկ պատանի, վոր Չարունակ քնում եր Քնած ժամանակ նա մի անդամ այնպես և վառում լուսնի պաղ սիրտը վոր լուսնը վար և իշնում և համբուրում Ենդիմիոնին:

~~59~~
~~38~~



ՀՀ Ազգային գրադարան



NL0166991



ШЕМПИР
Венецианский купец
ГИЗ ССР Армении Эривань